

„Droschak“  
ORGANE  
de la Fédération  
Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse:  
RÉDACTION DU JOURNAL  
„Droschak“  
GENÈVE (Suisse)

Հ.Գ. ԲԻ  
ԳՐԱԳԱՐԱՆ  
A.R.F. BU  
LIBRARY

## „ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՄԿԱՆ ԴԱՁՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

### Բ Ա Ր Բ Ա Ր Ո Ս Բ Է Թ Ի Մ Ը

Վանայ կոտորածը նորէն անգամ մը ևս կուգայ Տաստատալու թէ տասնեւհինգ տարիներէ ի վեր—Գողգոթայի վերելք մը—Թիւրք կայսրութեան մէջ հիւլէ մը իսկ փոխուած է դէպի հայութիւնը: Թիւրք պետական վարիչները—այդ համակոյտը կասկածելի բախտախնդիրներու—ոչինչ կը սորվին և ոչինչ կը մոռանան դժբախտաբար: Երէկը այսօրուայ կը նմանի, և այսօրը գուցէ վաղան: Կոյր և յամառօրէն արիւն-ուռչտ ճակատագրականութիւն մը կը ծանրանայ այդ երկրին վրայ, ուր մարդիկ աւելի չարիքին մէջ ընդունակ են գերազանցելու քան բարութեան մէջ և ուր մարդկային մտածումը ու բնաղղը արիւնի սատիղմին շուրջը կը դառնայ միայն:

Դաւաճանի մը մատնութիւնը կամ ունէ չնչին միջադէպ, պատրուակ և առիթ կտտեղծէ Թիւրք կառավարութեան կոտորածի ժամանցներ սարքել ալօսման դէպքէն ի վեր գերազանցելու գերագոյն արբշիւութիւնով մը:

Դաւաճանութեան ինչ զարհուրելի գաղափարը կը ներշնչէ մեզի Համիդի կառավարութիւնը, երբ իր ցեղին տգէտ խաժամուժին մէջ կը քայլերէ և ի հարկին կը պատրաստէ նամէրտ և անասպետական հակումներ, անբարոյական նեարդեր և ոճիրի թոյնը, այն է խնդալ զոհի երեսին, շոյել, զինամափ ու միամիտ ընելէ յետոյ դաշունահարել դաւաճանօրէն: Եւ դեռ սպասել այդպիսի եղեռնագործ ընթացի մը մէջ որ բարոյական մթնոլորդ մը ստեղծուի...

Վանի երկու թուղթիները, մէկը ոճիրը մերկացնող Թիւրքի մը կողմէ, միւսը քաղաքին Օսմանեան աւագանիին կողմէ, որ կը ջանայ Թիւրք ամբոխին մէջ ոճրագործութեան կռապաշտութիւնը մշտնջենաւորել, կուգան շեշտել երկրի գողաւագակ վարիչներու մութ հոգեբանութիւնը և ձգտումները, որոնք, չխղճահարելով մինչև իսկ երկրի շահերու վտանգին առջև, կը չարագեղծեն Թիւրք ժողովրդի տգիտութիւնը, բնագրայնութիւնը և կը փորեն անոր դժբախտութեան և կործանումի գահավէժները:

Շրջաբերականը, Օսմանեան աւագանիին մարդասպան ներշնչումով գրուած, „Ալլահի կանոնագիրը“ թելադրիչ անունը կը կրէ: „Սպաններ կեպուրներ“, ահա չարաշուք աղաղակը, որը ասիական սարուձորեր, մէկէ աւելի անգամներ, արձագանք տւած ու արտասուած են. և գուցէ Ասիոյ բոլոր գաղանները այնքան սունացած չեն ձմրան ու իրենց կատաղութեան գիշերները, որքան այդ մարդ-գաղանային մահասարսուռ ճիւղը լրւած, ու որոտացած է դժբախտ ժողովուրդներու գլխին, որը անիծեալ բախտը դրած է Թիւրք փատիշահներու հովանիին տակ:

Ինչով բացատրել այժմեան ընթացի անվերջ բարբարոսութիւնը,—գոյութեան հարցի պատրուակեալ մտածումով, կամ բարոյական գիտակցութեան պակասութեանն անոր ղեկավարող անհասներուն մէջ, որոնք շարունակ բացասական դերի մէջ կը ներկայանան, մտքի դաժան և տժգոյն միակերպութիւնով մը, և ժողովուրդներու բարօրութեան ու մարդկայնութեան զգացումի ու մտածումի բացարձակ ամայութիւնով... Ինչով բացատրել իրաւունքի, արդարութեան գաղափարի և մարդկային կեանքի վայրապարութիւնը և ունայնութիւնը, որոնք ամէն լոպէի, կուռքի բեկորներու պէս կարող են գետին փշրել: Ինչով բացատրել...

Քսաներուդ դարը չէ կրցած բարեշրջել այդ ընթացի մը, և երբ քաղաքակրթութեան լոյսին առջև ստիպուած է դիրք բռնել, շարժիլ և մարդկայնանալ, կամ կառավարական լուրջ և պարկեշտ հասկացողութեան գալ, երկրին մէջ կուռ և արդար համբերաշխութիւնը ստեղծել, ուրիշ բան չընել այլ ապիկարօրէն ծախել իր երկրին մասերը և կենսական շահերը օտարին, տնտեսական ստրկութեան մատնել պետութիւնը և շարունակել անբան և կամայական քաղաքականութիւնը—կոտորածը, և խեղդել ամէն բողբոջի և արդարութեան ձայն արեան գոլորշիներու մէջ:

Սուլթանի կառավարական ընթացի մը, մարդասպան մեքենայ մընէ միայն, և չներկայացներ իր ժողովրդին բարոյական ուժը, մարդկայնական ձգտումները: Այդ ընթացի մը առօրեայ զգայապաշտ գոհացումը փնտուած է իր գոյութեան մէջ, խոյս տւած մտքի ընդհանրացումներէ որոնք կտտեղծեն և կը կաղապարեն ցեղերը և լաւագոյն կառավարութիւնները: Աշխատած է, որքան կարող

է, անբանցնել իր ժողովուրդը, անոր մէջ սպաննելով կամ թունաւորելով մարդկայնական ամէն ձգտում և ազնուութիւն և մշակելով միմիայն կործանարար և աղետաբեր բնազդները: Ոչ մէկ կառավարութիւն այնքան թշնամի և դահիճը չէ եղած իր երկրի նիւթական ու բարոյական անկումին:

Այդ մահացուցիչ և դժոխային ընթացքը չէր կրնար ուրիշ միջոցառում ստեղծել այլ եթէ դժգոհութեան ու ըմբոստութեան խռովքներ ու փոթորիկներ, որոնց կը դիմադրէ Եղեռնին ընթացքը, արիւննոտ աւանդական դաշոյնը ափին. և երբ ամէն ինչ խաղաղած է արիւնի ալիքներուն տակ, կառավարական անբանութիւնը կերթայ հանգչիլ և վաւաշանալ իր որջին մէջ, բորենիի անհոգութիւնով մը, առանց պատճառները որոնելու, առանց իր ուղեղին մէկ բջիջը յոգնեցնելու թէ ինչ կարելի է ընել որ երկրին մէջ բարեկարգութիւն, ապահովութիւն և արդարութիւն տիրէ և առանց իսկ մտաբերելու թէ ժամանակը կը քայլէ, և իր դիմացը կը գտնուի խորհող, զգացող և պահանջող մարդ-էակը:

Արեւելեան հարցը բացելու օրերուն ենք, և թերևս անհաւանական չէ որ պատերազմ ծագի: Խելացի, հեռատես կառավարութիւն մը աւելի լրջօրէն պիտի անդրադառնար իր ներքին դրութեան վրայ և սիրաշահէր տարրերը. ընդհակառակը յափշտակութեան, հարստահարութեան և կոտորածի յարատև և անյեղչի սիստէմն է որ կը շարունակուի նոյնքան խանդավառ և բարբարոս ցնծութիւնով և վայրագութիւնով և որ նոյնքան ատելութեան ամպեր կը կուտակէ երկրին արդէն մտայլ հորիզոններուն վրայ:

Օսմանեան փառաշահներու պատմութիւնը, հազիւ բացառութիւնով, ոչինչ ունի արևոտ, բայց Ապրիլ 4-ի և աւելի ցցուն ըրաւ ինչ որ կար ախտաժէտ, գարշելի այդ ընթացքին մէջ — ինքը ըլլալով փառապանծ մարմնացումը և ցուցանքը կնամարդի Արեւելքին բոլոր անբարոյականութիւններուն, լրբութիւններուն և տրամադրի և եղեռնային հակումներուն: Երեսուն տարիէն աւելի է որ այդ մարդը մահի, արիւնի և սպանութեան միջոցով մը մէջ կապրի, ինչպէս բանաստեղծը իր երազներուն մէջ. Եսբիլի ողբերգութեան ոճրագործ հերոսներուն մէկուն համար, հեղինակ մը կրնէ թէ, շնագայլն է որ միշտ դէպի արիւնի հոտը կը ձգուի: Այսպէս բանի կը ծերանայ Ապրիլ 4-ի շամիդ, արիւնի պահանջը և հայաջինջ կողուցը աւելի ու աւելի կը բորբորին և անդիմադրելի կը դառնան անոր մէջ որ չէ կարող առանց դիակի ապրիլ:

Վանի կոտորածը վերջինը չէ գուցէ մահաւան սպանութեան շահատակութիւններուն, որուն ոճիրներով ծոցաւոր գանկը օրօրի նոր զարհուրանքներ կերկնէ, ամէն տեղ իր վատասեռ և սարսափահար գոյութիւնը անվտանգ... և թերևս անկենդան իրականութեան տուր:

դնելու համար և սակայն միշտ ալ նորերը կը ծնին աւելի սպառնալից, աւելի հրամայական: Ստրուկի զաւակ ամէն կողմ ստրկութիւն կը սիրէ տեսնել, սողուններ և ոչ պայծառափայլ ճակատներ, մեռելութիւն և ոչ կեանք:

Իր դժոխային թագաւորութեան մէջէն, հեծեծանքներով, աղիողորմ ճիչերով, հառաչներով ու երիտասարդ և կորովի սրտերու հոգեւարքի հանդիւններով փոթորկուած, զայրոյթի և օրէստեան արդարավրէժ բազուկներ կը պրկուին, իրենց վեհագոյն ջղաձգութեան մէջ անգթութեան և դաւաճանութեան փառչաշահն դէմ, որ կործանելով ու անպատելով իր երկիրը և իր ժողովուրդը, նիւթական անկումին շողկապելով բարոյական անկումը, արիւնկզակ վեհագետի տխուր անմահութիւնը ստացաւ:

Եթէ այս տխուր աշխարհը դժոխք մ'ունենար՝ Համիդ արժանի էր ան որ թագաւորը ըլլալու...

## Վ Ա Ն Ի Դ Ե Պ Ք Ե Ր Ը

«ԴՐՕՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Անգլիական, Բրաւսական, իսպախան արտաբն գործոց նախարարներուն:

Վսեմ,  
Մենք մեր Բիւրօյին մէջ հաւաստի աղբիւրէ տեղեկութիւններ ունինք որ թիւրքահայաստանի և մասնաւորապէս Վանի մէջ, նոր կոտորածներու պատրաստութիւններ կը տեսնուին: Առաջին կոտորած մը եղաւ սոյն բաղադրին մէջ մարտ 23-ին, թիւրք ժողովուրդը իշխանութիւններու գրգռումով և առաջնորդութիւնով, սպաննեց 60-ի չափ խաղաղ հայեր: Յանցաւորները, ինչպէս միշտ, անպատիժ կը մնան: Ահա անունները այն գլխաւոր պաշտօններուն որոնք կոտորածը սարքեցին: Աբրաքանիչ ատեանի նախագահը, ընդհանուր դատախազը, ոստիկանապետը, հաշակալութեան պետը, զինուորական քարտուղարը, հարցաքննիչ դատաւորին փոխանորդը և այլն: Օգտելով համաշխարհային անուշադրութենէն, Օսմ. կառավարութիւնը կը պատրաստէ աւելի սարսափելի հարած մը: Վանի հայկական թաղերը արդէն պաշարած են: Բնակիչները ենթակայ են սպառնալիքներու: Եթէ կառավարութիւնը միայն յեղափոխականները հալածէր մենք չէինք բողոքեր, բայց մենք սաստիկ զայրացած ենք և բուն կերպով կը բողոքենք տեսնելով թիւրք կառավարութիւնը որ սիստեմատիկ կոտորածներ կը սարքէ խաղաղ ժողովրդին դէմ: Բռնադատելով այսպէս բնակիչները խմբովին գաղթել ահարկու ճակատագրէ մը ազատելու համար:

Վսեմ,  
Չէր կառավարութեան մէկ խօսքը, կորովի ազգարարութիւն մը, բաւական պիտի ըլլային փրկելու անբախտ բնակչութիւնները, որոնք, սակայն, երաշխաւորուած են միջազգային դաշնագրերով:

Եւրոպական մամուլին:

«Վանի մէջ գրութիւնը ծանր է մարտ 23-ի կոտորածը կազմած է իշխանութիւններու կողմէն և կատարած պաշտօնէն: Հեղինակները ծանօթ են բայց կը մնան անպատիտ: Հայ ժողովուրդը սարսափի ենթարկւած է: Խմբովն բանտարկութիւններ: Զօրքեր լեցւած են քաղաքին հայ թաղերուն և արուրածաններուն մէջ: Հասցազ 150, Սեղ-քիա 100, Քուրուպաշ 100, հետեւեալ գիւղերուն մէջ Քըզ-ըլճա 50, Արչակ 100, Քարաքօնիս 150: Զօրքերը կը կերակուին գիւղացիներու հաշուով: Ոստիկանները կը կողպան տունները: Գիւղերու մէջ հազարակիցութիւնները ընդհատուած: Քէօր Հիւսէյին փաշա և Քեամիլ պէյ կաւերեն երկիրը»:

«Վանը և գիւղերը, զօրքերով շրջապատուած, սովամահ վիճակի մէջ արմատներով կը սնանին: Մանրամասն յատակագիծ մը գտնուած է նոր կոտորածի մը համար: Գաղտնի շրջաբերականի մը մէջ, սև-հարկերակներ կը յորտորեն իրենց հետևորդները, փարատել հայերուն երկիւղը, բանալ տալ շուկան, յետոյ խուժել քաղաքը, կրտորել և կողպտել միաժամանակ յարձակիլ Այգեհատանի վրայ, պատրակելով որ Ֆեդայիները միևնույն օրը վրայ կը քալեն վրէժխնդիր ըլլալու համար»:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԷՆ

Վանէն հիւպատոսական տեղեկագրերուն նայելով գրութիւնը աւելի վատթարացած է: Թիւրք պաշտօնեաները, որոնք վերջին կոտորածները գրգռեցին, և որոնց հեռացումը պահանջուած է ռուսական և անգլիական իշխանութիւններէն, դեռ իրենց պաշտօնին վրայ են: Հայկական թաղը պաշարուած է զրքերով: Ար պահանջի յեղափոխականներուն և զենքերուն յանձնուածը:

Թրքական տեղեկութիւնները համեմատ Վանի հայոց թաղին մէջ խուզարկութիւններ կատարուած միջոցին 200 հրացան գտած են: Յեղափոխականները յաջողած են փախչել:

Հիւպատոսական հեռագրի մը համեմատ, խնդարկութիւնները հայերու տներու մէջ կը շարունակին: Վեց յեղափոխականներ որոնք տան մը մէջ ամբացած էին կատաղի դիմադրութիւն ըրին: Սպաննեցին մէկ զին որ և վիրակարեցին մէկ ուրիշ և իվերջոյ յաջողեցան փախչել:

Գտան ահագին քանակութիւնով հրացան, փամփուշտ և ուժանակ: Յարդ 40 հայեր ձերբակալուած են: դեռ մատուցութեան ցանկին վրայ կան մօտ հազար վտանգուած հայեր: Ռուսիոյ և Անգլիոյ հիւպատոսները միջամտեցին վալիին մօտ ընդհանուր ներման համար: Ռուսական դեսպանը Պոլիս մայիս 26-ին նոյն ուղղութեամբ դիմում ըրաւ Գրան:

ՎԱՆ, ապրիլ 6

Գաւառն Գաւօն սպաննեցաւ մարտ 23-ին ոստիկանատան առջև ուր կապէր իբր ապահով վայր: Ահաբեկիչը տեղացի երիտասարդ մըն է որուն ետեւէն բաւական ատրձանակ էին արձակեր, բայց ան կրակելով կանցնի թրքական թաղերէն և կը մտնէ հայկական մասը:

Սպանութեան լուրը առնելուն պէս խուլիկանութեան պարագլուխները խուժանին գլուխը անցած կը սկսին աջ ու ձախ զարնել շուկայէն վերագարձող հայերը: Սպաննուածներուն 90% ըլլալով սրազէնով և փայտով եղած են՝ այս է պատճառը որ ժողովուրդը ան-

գիտակ եղածին՝ կուգային և թրքական թաղերուն մէջ զօհ կը գնային: Սպաննուածներուն թիւը կը հասնի 65—80-ի: Հիւպատոսները կոտորածի լուրը լսելուն դուրս կուգան շուկան տանող ճանապարհի վրայ և վերագարձողները կը պաշտպանեն խուժանի յարձակումէն: Քրանսական հիւպատոսը գիշերը ժամը 2-ին կը գնայ քաղաք և մօտ 300 հոգի կը բերէ Այգեհատան, յաջորդ օրը ռուսական և Ֆրանսական հիւպատոսները միասին կերթան քաղաք և մնացածները, մօտ 1000 հոգի, շրջապատած 200 զօրքով, կառաչնորդեն Այգեհատան: Իսկ Անգլիական հիւպատոսը գընացեր էր Ալոր Դար, այնտեղի հայերը պաշտպանելու: Զինուորական հրամանատարը (Ֆէրիք) ևս մաս մը հայեր ուղեկիցներով կառաչնորդէ Այգեհատանի թաղը: Այդ օրէն իվեր քաղաքը պատերազմական վիճակի մէջ է, հայերը չեն համարձակիր գնալ խանութները բանալ, չը նայած կուսակալի և Ֆէրիքի հաւաստումներուն: Քանի մը օր առաջ մուսնտիկը յայտարարեց կուսակալի կողմէն որ շուկայ չը գնացողը 2 ոսկի տուգանքի կենթարկուի, իհարկէ մարդ չգնաց, որեւէ երաշխաւորութիւն չկայ:

Չարագործներուն պարագլուխները ազատ կը շրջին ոչ մէկ պատասխանատուութեան չեն ենթարկուած: Այժմ հայերը և թիւրքերը իրարու թաղ չեն երթար: Ոչ հաց կայ ոչ դրամ: Ժողովուրդը անօթի և սոված է: Երկիւղ կայ որ սովի հետեւանքով համաճարակ կարող է ծագիլ:

Գրեթէ ամբողջ Արևելեան թիւրքիոյ, և մասնաւորապէս Ասպուրականի մէջ ըէտիֆները հաւաքուած են որոնց արդէն զենքեր բաժանուած են: Տեղիս ըէտիֆներուն տաճկական մաւզէրներ, իսկ կարին գերմանական մաւզէրներ բաժնուած են:

Կառավարութիւնը արձակեց այն մուսթաֆազները, որոնք ըէտիֆներու փոխարէն մտեր էին ծառայութեան մէջ ամսականով, այն առարկութիւնով որ կարող է պատահել որ անոնք ալ զենքի տակ կանչին: Երգնկայէն, Տիարպէքիրէն, և Սվազէն արևմուտք գտնուողներ—ըստ նոր տեղեկութեան շարժման մէջ կը դուրս և ըստ ոմանց դէպի Պաղտատ պետք է երթան:

Ճէլալ փաշան 5 վաշտ զօրքով և թնդանօթներով կարինէն ճանապարհուր է դէպի Վան: Թիւրքերու ըսածին նայելով, եթէ Վանի մէջ յեղափոխականներու հետ չը բռնուի, մէկ վաշտ ալ ասկէ առնելով կանցնի դէպի սահմանագլուխ:

Համիդիէներուն մէկ քանի ամիսէ իվեր հրաման ուղարկուած է որ պատրաստին, վերջիններս արդէն սկսեր են ձիեր գնել:

Քանի մը օրէ իվեր լուրեր կը պտտին որ համիդիէներ քաղաք պիտի գան նոր զենքերով զինուոր և յետոյ ճանապարհուր իրենց որոշած վայրերը, ըստ ոմանց, յատուկ յեղափոխականներուն համար բերել կը տրուին անոնք: Երէկ լուր առնեցաւ որ Միւշիրը հեռագրեր է որ համիդիէները պատրաստ մնան իրենց տեղերը: 10,000 ոսկի եկած է պատերազմական պատրաստութիւններու համար: Ընդհանուր տպաւորութիւնը այն է որ ուժեղ կերպով պատերազմական պատրաստութիւններ կը տեսնուին:

ՎԱՆ, 20 ապրիլ

Գաւաճանութեան և անոր հետեւանքներու մասին արդէն գիտէք: Ընդհանուր կորուստն է մօտ 300 հրացան և 300 հազար փամփուշտ: Գաւաճանը ամիս ու կէս ապրելէ յետոյ սպաննեցաւ: Թիւրք խուժանը որ նախօրօք արդէն պատրաստուած էր աւելի մեծ սրիկայական ձեռնարկի համար, նոյն րոպէին սրագէնքերով, սպաննեց և վիրաւորեց մօտ 80 հոգի: Առաւելարութիւնը շատ թոյլ է և երբէք տրամադիր չէ պատժելու պարագուհները: Երես առնելով այդ քայլէն թիւրք խուժանապետները կազմեր են միապետականներու կուսակցութիւն մը անւանելով զիրենք, «Ֆէդայի հետապնդող թիւրք մարմին»: Ատոնց թիւրք օրէօր կաճի շնորհիւ ծայրայեղ անտեսական տագնապի և սովի և թիւրք ժողովրդի վայրենի բնազդներին: Իրենց գաղտնի ծրագրին մէջ կուզեն վատահոլութիւն ներշնչել մինչև որ հայերը բազաք երթալով շուկան ամբողջովին բանան: Ահա այդ ժամանակ շուկայի և քաղաքի դռները բռնելով ատրճանակներով ու դաշոյններով պիտի կոտորեն ու կողոպտեն ժողովուրդը ապա Այգեստանի վրայ քայլեն: Այդ մարմինը յատուկ կնիք ալ ունի: Շուկան հայերէն 1 ժամ հեռու է, այդտեղ է Վանի ամբողջ երիտասարդութիւնը, մինչև քաղաք բացառապէս թիւրք թաղերն են, իսկ շուկայ չը գնալ ըսել է բոլորովին սովին մատնել:

Թիւրք կառավարութիւնը փութկոտօրէն զօրք կը հաւաքէ Վարինէն և Տիարպեքիէն: Վարինէն արդէն մէկ վաշտ և մէկ գումարտակ և ահաբէն ուղարկուած թիւրք եկան: Լուր կայ թէ 4 վաշտ մը և մէկ գումարտակ ևս պիտի գան: Բէտիֆները և համիրիէները ևս պատրաստ վիճակի մէջ են: Քաղաքին շուրջի գիւղերն ալ զօրք պիտի լեցւի: Միջնորդը ելքերականացած է: Գաւառներու մէջ անխնայութիւն սկսեր է, գողութիւն, մարդասպանութիւն, քիւրդ ասպատակային խրմբեր, որոնք ամէն կողմ կը թափառին... իսկ սով-թագաւորը իր մագիլներով կը գիշատէ Վանի ժողովուրդը: Նպաստեց յանձնաժողովները 1—2 փուռ ունին ու գարեհաց (ցեխանման մի բան) կը վաճառեն, 1500 ընտանիք իբր թէ կապրին ատով: Երթեկութիւնը բոլորովին դադրած է գաւառներու հետ:

Գաւաճանի մատնութեան բոլոր փաստաթղթերը յանձնուած են հինգ հոգիէ բաղկացած յանձնախումբի մը որ սկսեր է քննել ու գործադրել: Տեղական ամբողջ երիտասարդութիւնը երեւի պիտի լեցնեն բանտեր, եթէ սակայն 96-ի դէպքերը չը կրկնուին...

### ԿՈՏՈՐԱԾԻ ԾՐԱԳԻՐՆԵՐ

(Մերկացում-բռուցիկ՝ քիւրդի մը կողմ)

#### I

Վարը գրւած Ֆէսատճիների թշնամական գրգռումների նպատակն էր Վանի իսլամների մէջ խռովարարութեան սերմեր ցանել և մտիկ շընողներու վրայ ամէն միջոց ի գործ դնելով խաբել և ամենէն առաջ շուկայի մէջ յուզում յառաջ բերելով թաղերում անգէն հանդիպողը սպաննել և վերաւորել, եթէ վալին

փորձէր իսլամների դէմ միջոցներ ձեռք առնել, որոշած էին Գաւիթի ձեռքով սպաննել զայն: Այս ժողովի կազմակերպութիւնը Գաւիթի դէպքէն ամիս մը առաջ մտադրւած և ծրագրւած էր, այնպէս որ շարթըւան մէջ երկու գիշեր «սրա ի պատիւ» (Գաւիթի) պատրուակով մինչև առաւօտ կը խորհրդակցէին, այնպէս որ կատարեալ պլան մը պատրաստած, օրէ օր առիթի և պատահութեան կապակէին: Գաւիթի դէպքը տեղի ունենալուն պէս, իսկոյն Ֆէսատճիների ժողովը յարմար առիթ գտնելով նախապէս իրենց մտադրած խռովարարութիւնը և իրենց արբանեակներին տուած հրահանգները ամբողջապէս կիրադործէին:

Այժմ Վանի իսլամութեան մեծագոյն մասը և երեւելիների կարևոր մասը՝ իրենց վնասակարութեամբը յայտնի այս Ֆէսատճիների ժողովի պատրանքներով, չուզեր անոնց ինկած հորը ինչաւ բայց զգուշացող ժողովրդեան մէջ երկիւղալի դրութիւն կը տիրէ: Այս ժողովը տէրութեան և երկրի վնասը կը ցանկայ: Մուզիգան թէև կարգ մը խուլիգանների ձեռքը տրւած է, սակայն այս գաւաճանները իրենց ուզած ձայնը կը հանեն: Այս բռնակալները այժմ իսկ ժողովուրդը համոզելու և իրապէս պատրանքների հրապարակ տալու համար յատուկ պաշտօնեաներ կը յատկացնեն: Վալին գիտէ այս ժողովը, կը կարծէ որ մեծ և կարևոր ժողով մըն է, այս պատճառաւ երկրի դատաւորը, պետութեան ներկայացուցիչը և ժողովրդի տէրը ասոնցմէ կը վախնայ: Այս նենգամիտ մարդիկ, եթէ այս անգամ ալ թողաւութիւն ստանան՝ հազար ու մէկ նենգութիւններով ժողովուրդը ձեռք կը ձգեն:

Եթէ այս բռնակալները այս տեղէն չաքտուին կամ չը պաշտօնանկին, իսլամ ժողովրդի մէջ այս կարգի վատ նախաձեռնութիւններ շատ պիտի ըլլան, ասոնք պատճառ պիտի դառնան կառավարութեան արդարասէր «իճրաթի» յետաձգմանը. ընդհակառակը հաստատ համոզւած եմ որ՝ հեղինակները—պատճառ դարձողները ըստօրինի եթէ պատժին այսպիսի դէպքեր այլևս երբէք տեղի չեն ունենար:

Ասկէց 40 օր առաջ վերը յայտնած Ֆէսատճիների ժողովի անդամներու անունները և իրենց շահատակութեան տեղերը:

1. Իսքիմաճ րէյիզի (ժողովի մեծագլուխը)
2. Միսսայի ումուլի (ընդհ. դատաւար)
3. Ահմէտ պէյ
4. Գաւիթ
5. Մուհամադ Միսլէյիզի (հաւաւկալ)
6. Հանի Հիւսնի
7. Ասոք Էթէմի
8. Սասրգ Էթէմի
9. Մուհամադ Էթէմի փեսան
10. Չապրիա քապուր Էթիպի Մուսա
11. Միսրանսրգ վէլիլի Թէթիգ
12. Շապանիլի Էօմէր

Հետեւեալ կերպով են բաժնած կոտորածի վայրերը:

Իսքիմաճրէյի Ահմէտ	} Խաչ փողոցէն, բաղնի- Հաօի Հիւսնի
Միսլազիմ Հիւսնի	
Միսլազիմ Հիւսնի աղա Թիւմարի ուսիկանապիս	} Բի դուռնէն մինչև Միս- սայի ումուլիի տուն:



Միլսսայի ումումի (ընդհ. դաստիարակ)  
 Ասօց էժէնսի  
 Մունասէպէ Մումլէյէրի (հաւաւակայ)  
 Սասրգ էժէնսի  
 Միււէյիզի փեսան՝ Մէհմէտ

Միլսսայի Ումումիի տու-  
 նէն միւնչեւ համիճ եւ  
 միւնչեւ Հասսան փաշայի  
 տուն:

Հաջի Հիւսնի  
 Սօլլա Կամայիլ զաւէ Մէհմէտ էժ.  
 Գարա Ձէնէնէժ ողլը Եուսուժ եւ եղ-  
 բայրը

Բաղնիքի դուռնէն ըս-  
 կեսայ—տուրէնի արջա-  
 կայի:

Մուսա էժէնսի  
 Թէմիկ էժէնսի  
 Եօւէր էժէնսի

Թահիր պէյի տունէն  
 միւնչեւ Եարսը Պասսանի  
 դուռը, միւնչեւ Սապօն-  
 նեանի տունը:

Հանի պէյ Չաւէ Մահմուտ էժէնսի եւ ընկերները Բուն Արարէ եւ  
 Կլոր Գար:

Ներկայ պարագային մեր մեծամասնութիւնը ասոնց  
 խաբեբայ պատրանքներուն չենթարկելով Հանդերձ  
 Մուհամմետի կրօնի և շէրիաթի սահմաններէն դուրս  
 չելլեր: Հանրութեան շահը յայտնի վնասէ պաշտպա-  
 նելու մասին մեր տածած բաղձանքը եթէ գնահատուի  
 մեր խիղճը Հանդիստ մնալով, երախտապարտ ևս կը  
 լինինք:

Ոչ կուսակցական թիւրք մը

II

ՎԱՆ, 20 ապրիլի

Վանի սև հարիւրակային խումբը, որ մարտ 23-ի  
 կոտորածն առաջ բերաւ, նոր ջարդ մը ծրագրած է,  
 որուն մանրամասները յաջողեցանք իմանալ հէնց այ-  
 սօր: Այդ խումբը հրատարակած է գաղտնի շրջաբե-  
 րական մը, սա խորագրով «Թիւ 2, Աստուծոյ կանոնա-  
 գիր»: «Ամենուն պէտք է կարգաւ մի-  
 այն մեծերուն: Իսլամ Միութեան Գիւնատուն»:

Ահնարկելով նախորդ թիւ 1 կանոնագրի յօդած-  
 ներուն (որ մեր ձեռքը ինկած է գեռ), թիւ 2 «Կա-  
 նոնագիրը» երկարօրէն կը բացատրէ թէ իսլամ Միու-  
 թեան մէջ մտնող երիտասարդը պարտաւոր է երգում  
 տալ, իրեն վիճակած գործը անպայման կատարելու  
 համար:

«Եթէ չը կատարէ—կը շարունակէ թուրքիկը—կօ-  
 միտէն կանոնագրի 8-րդ յօդածի համաձայն ուխտա-  
 գրութիւն ալ մեռցնելու է. եթէ մէկը չը սպաննէ ուխ-  
 տագրութիւն ան ալ մահուան պատժի պիտի ենթարկուի:  
 Գուր պիտի առաջարկէ թէ այսպիսի գործեր գէշ են:  
 Արդէն քրիստոնեաները կը տեսնենք, անոնք ալ Միւ-  
 թիւնը այսպէս հաստատած են: Տեսնը այն մարդը  
 որ ֆէդայիներու վախէն բաղնիքի դրան առջև մատ-  
 նիչը սպաննեց, (կահնարկէ մատնիչ Գաւթի ահաբե-  
 կումին), ըսել է որ անոնք այս կարգի երգումներ ու-  
 նին: Այդ ահաբեկիչը թէև 15 տարեկան պատանի  
 էր, 100 իսլամներու մէջ մատնիչը սպաննեց և ինքն  
 ալ ազատեցաւ: Ասոնք վաղը մեզի ալ պիտի սպան-  
 նեն, երեխաներնիս սրէ անցընեն և պատիւնիս ոտնա-  
 կոխ պիտի ընեն:

«Մեր իսլամներու մէջ եղած երկչոտութիւնը ոչ մի  
 տեղ չը կար Լրտեսը զարնւած ատեն մենք, կօմիտէս,  
 եղանք պատճառը, որ կրցանք այնքան քրիստոնեայ  
 սպաննել շուկային, դաշտին ու փողոցներուն մէջ: Մեզ

մէ ոչ մէկուն բիթը չարիւնեցաւ: Կառավարութեան մի  
 վախենաք, ան այնպիսի պարագաներու մէջ բան չըսեր,  
 աւելի կօզնէ, միթէ՞ կառավարութիւնը իսլամ չէ՞:

«Թիւ 1 կանոնագրի 9-րդ յօդածի համաձայն հը-  
 րապարակը հանդարտեցնելու ենք. հայերը ամբողջովին  
 շուկան թող բանան, և այն ատեն անոնց հետ կը  
 վարենք վարի յօդածներուն համաձայն:

«Յօդած 11.—Քաղաքը հանդարտեցնելէ ետք  
 էն ջիւմէնը, գիշեր ատեն որոշում տալու է, և հրա-  
 հանգներ տալու է ամենուն և ամեն մէկ պարագլխի,  
 իր ձեռքի տակ գտնւած մարդիկ հրահանգելու 12-րդ  
 յօդածի համաձայն:

Յօդած 12.—Ամեն մարդ իր կարծիքը յայտնելէ  
 ետք, կօմիտէի կողմէ քանի մը յօդած պարունակող  
 կանոնագիր մըն ալ պիտի տրուի ձեզի, պէտք է մարի  
 մէջ պահել, իսկ եթէ ժողովի չը գայ մէկը, այժմէն  
 իսկ յայտնելու է, որ շուկան բաց եղած ատեն առա-  
 ջուց ամեն պարագլխի 15—20 մարդ ընկերանալու է,  
 և ամենուն շուկայի որոշ մաս յատկացելու է: Այս  
 գործի կատարման օրը պարագլուխները ժամագիր լի-  
 նելու են և բոլորի ժամացոյցները մէկ ըլլալու են:  
 Որոշած ժամուն՝ բոլորը մէկէն յանկարծ ամեն տեղէ  
 շուկան կօխելու են, բայց այնպէս որ առաջուց մարդ  
 չիմանայ: Ամեն խումբ իր ներս մտնելիք դրան մօտերը  
 սրճարանի մը մէջ կազմ ու պատրաստ ըլլալու է,  
 կարգադրւած ժամուն իւրաքանչիւր խումբ ներս խու-  
 ժելու է: Ոչ մէկու ձեռքը հրացան գտնելու չէ, այլ  
 ատրճանակ, սուր, դաշոյն և նման բաներ, որպէսզի  
 ոչ ոք առաջուց բան մը չը նկատէ: Յետոյ դռներէն  
 ներս խուժելով 5—6 հոգի դռները լաւ փակելու են.  
 ասոնք ատրճանակը ձեռքերին՝ դէպի դուռը դիմող  
 հայը սպանելու են: Գործը լմնցած պէտք է համարել  
 երբ հայ մը կենդանի չը մնայ և շիւղ մը առանց  
 կողոպտելու:

«Արդէն երբ շուկայի մէջ եղածները սպաննենք,  
 միւսներու քով ալ ուժ չի մնար, (հայոց) պարագլուխ-  
 ները շուկան են, անոնք որ կոտորեցան, ալ վախ չը  
 կայ մեզի համար: Կառավարութիւնը այդ մասին ո՞ր-  
 կէ պիտի իմանայ: Պիտի ըսեն որ երկու ժողովուրդ  
 շուկայի մէջ իրարու հետ կուեցան, ու կառավարու-  
 թիւնը անոր ետեւէն իյնալով հայերը պիտի կոտորէ:  
 Գուր բնաւ մի վախնաք, յանուն Աստուծոյ, եթէ  
 այդ բեաֆի իրն երու ձեռքը հրացան ալ ըլլայ՝  
 արձակելու անկարող են, փորձով ալ տեսնը:

«Շուկան այսպէս կտրելէ ետք, դեռ շուկան չը կօ-  
 ղոպուած, «Այգեստանէն ֆիդայիներ յարձակեցան»  
 ըսելով՝ հոն յարձակելու է: Եթէ առանց Այգեստանի  
 վրայ երթալու՝ կողոպուտի սկսինք, ֆէդայիները ժո-  
 ղովուրդը պիտի կոտորեն: Մենք ազատիլ չը պիտի  
 կրնանք, ալ անկէ ետք Միութիւնս ոչ մի բանի պիտի  
 չը կրնար ծառայել հանրագիր կազմելով, հեռագիր  
 տալով բան մը ընել պիտի չը յաջողինք. ո՞չ Պօլիս և  
 ո՞չ ալ կուսակալը մեզի չեն ըսեր:

«Քանի որ մեր վախճանը վտանգալից է, այժմէն  
 վտանգի մէջ մտնենք: Եթէ մենք այսպէս չը գործենք,  
 ֆէդայիները մեզի չը պիտի ներեն, գիշեր մը մէկէն  
 յարձակելով պիտի շփոթեցնեն մեզ և բոլորս ալ կօ-  
 տորեն պիտի»:

«Չգուշ և լուրջ աշխատելով այսպէս ընելու ենք: Լեթէ հայերը այժմէն շուկայի մէջ չը կոտորենք, ուրիշ պետութիւններ պիտի աշխատին ի կարգ հրաւիրել մեզ, «սրիկայ են» ըսելով: Իսկ հայերը, ճնշած են ըսելով: Նորէն ամեն տեսակ նախատինքներ պիտի թափեն մեր գլխուն: Կարինի, Բաղէշի պէս ընելու է, ուրիշ ճար չը կայ:

Ճեղայի հետապնդող թիւրք ժողով»

Ահա այդպիսի այլանդակ թռուցիկներով մեր խուլիգանները կաշխատեն գրգռել մեր դրացի մահմեդականներու մոլեռանդութիւնը, խեղաթիւրելով կարինի ազատագրական գեղեցիկ շարժումը, իրենց աւազակային-եղեռնական արարքները պարտկել ջանալով հայրենասիրական քօղի տակ:

**ՂԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՎԱՆԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ**

(Ուղղւած Հիւպատոսներուն, Կառավարութեան և Առաջնորդին)

Մարտ 23-ի անլուր խժդժութենէն յետոյ որուն զհրացին շատ մը անմեղ սովորեցներ և նոյնչափ ընտանիքներ ալ թշուառացան, մենք մնացեալ հայ ժողովուրդը՝ առ ահի նոր վայրագութեանց՝ մեր տուններուն մէջ փակւած, խորհրդակցեցանք անցեալ, ներկայ և ապագայ կացութեան վրայ և հետեւեալ եզրակացութեան յանգեցանք:

Անդրադառնալով մօտիկ անցեալէն մենք կը տեսնենք որ մեր շրջապատի Մամրտանք, Խիզան, Սպարկերտ, Կարկառ ևն. գաւառակներ որք 40—50 տարի առաջ հարիւրաւոր տուններէ բաղկացեալ շէն և բարգաւաճ հայ գիւղեր ունէին, վաղուց իվեր ամայացած են և հայեր թողած իրենց տունն ու տեղը կամ օտար աշխարհներ գաղթած են և կամ Վանայ մէջ թշուառ և աստանդական կեանք մը կը վարեն, զուրկ սեփականութենէ և ունէ ստացածքէ որոնք իրենց քերթը դրացիներու սեփականութիւն դարձած են ճրի և կամ չնչին դնով մը:

Գեռե երեսուն տարի առաջ երբ հայերը վերջին արևելեան պատերազմի ժամանակ այնչափ անձուկեր ծառայութիւններ կը մատուցանէին թրքական բանակին տարով հաց, ուտեստ, զգեստ, կամաւոր զինւորներ և բանակի այլևայլ պիտոյքներ, երբ հայերու սայլերը և անասունները բանակի ռազմավթերը, ուտեստ և այլն կը փոխադրէին և հայ գիւղացին ձրիապէս կը կերակրէր թիւրք զինւորը և քերթը կամաւորները, ասոր հակառակ հազարաւոր հայեր իզուր տեղ սպանւեցան, հայ գիւղերը կողոպտւեցան, քերթը զինւորը իրեն եղած հիւրընկալութեան փոխարէն մեծկակ գուժար մը տ ի շ ք ի ր ա ի առնելով միայն կը հեռանար, իսկ հակառակ պարագային կապաններ և կը կողպտէր: Վանայ շուկան ալ նոյն միջոցին էր որ հրոյ և կողպտուի ճարակ եղաւ և հազարաւոր ընտանիքներ մոխիրի վրայ նստան: Այն անդէտներու հետեւանք եղող սարսափելի սոյն արդէն անմուռանալի է իր սովանահ կոտորածով Արդ, երբ այժմս տընտեսական և քաղաքական սոսկալի կացութեան բուն պատճառը կը վերագրէի խռովարարներուն, ո՛չ ապաքէն ասկեց 20—30 տարի առաջ չըկային ատոնք:

Գալով մօտիկ անցեալին երբ հայերը բողբը Բ. Դրան հասցուցին արդիւնք եղան 1895—1896-ի աշխարհաւիր դէպքերը, հարիւր հազարաւոր հայերու կոտորածը, հուրը, սուրը, կողոպտուը և այլն: Արճէշի, Ալճաւազի, Աղբակի, Նօրտուզի հայաբնակ գաւառներու բազմամարդ գիւղերը ամայացան, ինչպէս նաև ասորաբնակ կարդ մը գաւառակներ՝ Ճիւլամերի, Պերվար, Լէվի և այլն և քերթերը բնակութիւն հաստատեցին թէ այդ վրէժած և թէ դեռ ուրիշ հայաբնակ գիւղերու մէջ արդիւնաբերող և աշխատող հայ ժողովուրդի տեղ, պարկեշտ հայ բնակիչները վտարելով

կամ իբրև դերի իրենց ծառայեցնելով: Այդեւտանի թըրքախառն թաղերու մեծ մասը բնաջինջ եղաւ կոտորածով իսկ մնացեալը դատարկեցան հայերէ և հայ ժողովուրդ եկաւ զետեղւեցաւ այն թաղերու մէջ միայն ուր իդէպ նոր կոտորածներու երոպական հիւպատոսներու և օտար դրօշի պաշտպանութիւնը վայելել և անօթի չը մեռնելու համար կտոր մը հաց մուրալ կը յուսար:

Թէև 1896-ի դէպքերուն հետեւանքով սովը քանի մը տարիներէ ի վեր պարբերական վիճակ մը ստացած է և հայ ժողովուրդը առհասարակ կը նեղուի հացի սաղմապէ, այնուամենայնիւ կը շարունակէինք կրել ու տոկալ ակնկալելով՝ իբրև հաւատարիմ հպատակներ՝ կայսերական օրինաց համաձայն հաւասար օրէնքներ վայելելու, և ահա անակնկալ կերպով կատարւեցան մարտ 23-ի անլուր և վայրագ խրժդժութիւնք. բողբավթիւ անմեղ և անգէն հայեր քաղաքէն տուն վերադարձած ատեն թիւրք վայրագ խուժանէն անգթաբար սպանւեց, որոց դիակներն անգամ անյայտացան զուրկ մնալով կրօնական և հողի ներքև թաղւելու միթարութենէն:

Ուստի այսօր ամսի մը մօտ տուններնուս մէջ փակւելու պարտաւորւած առ ահի և անօթի, տեսնելով որ բազմաթիւ հայերու արիւնք թափող ոճրագործներէն ոչ մին պատժւած է ցայսօր, դարաւոր դժբախտ փորձաւորութեամբ համոզւած ենք որ կրօնի, ազգութեան տարբերութիւն և պետութեան օրինաց թերի գործադրութիւնն է պատճառը մեր այս բողբ թշուառութեանց: Եւ ներկայ դարնան երկրագործութեան բուն շրջանին երբ ապահովութիւն վերցւած, հաղորդակցութիւնք կարւած և վարուցանք իսպառ դադարած է, անմիջապէս հետեւանք եղող աւելի անտանելի սովի մօտապատկեր արդէն ամենուս աչքի առջևն է:

Հետեւաբար, նկատելով որ մեզ հարստահարող քերթը ցեղի փոխանակ ըստ օրինի զսպելու ղէնք կրելու և ասպատակելու սապարեզն ընդարձակւած է և իր շահատակութիւնները շարունակելու դիւրութիւն ստացած է:

Նկատելով որ մինչդեռ տուրքերը կրկնապատկւած և եւսապատկւած են, ընդհակառակը ապրուստի անհնարութիւն յառաջ եկած և ճամբաներու փակւելովը և սովը մնայուն կերպարանք ստացած է:

Նկատելով որ երկրի մէջ մասնաւոր դէպք մը պատահած ատեն հայ ժողովուրդը պատասխանատու կը բռնուի և թիւրք ժողովուրդը կամ սպանուլից դիրք մը կառնէ և կամ անմեղ ու անգէն հայերու վրայ յարձակելով կը կոտորէ, հետեւաբար կոտորածի ուրականը միշտ մեր աչքի առաջին ցցւած է:

Նկատելով որ յաշս օրինաց երկրի բոլոր ժողովուրդք հաւասար համարւած ատեն, թիւրք և քերթ, ժողովուրդք ղինւած կը պատին, իսկ հայեր ինքնապաշտպանութեան համար դանակ մը իսկ կրելու համար՝ արտօնեալ չեն:

Նկատելով որ հայ ժողովուրդը՝ կրկնապատկւած բոլոր տուրքերը անտրտունջ վճարած ատեն խեթիւ կը նայի իրեն, շատեր ամբաստանելով տարապարտուց՝ տարիներով բանտերու մէջ շարչարանքներու կենթարկին, հարցաքննութիւնք հակառակ օրինաց անհաւանապէս կ'երկարաձգէին և այս պատճառներով շատեր դատարանէն կանչւած ատեն փակստական ըլլալու կը պարտաւորին:

Վերջապէս նկատելով որ ամի մը քրիստոնեայ հայ ժողովուրդը շրջապատւած մահմեդական, թիւրք և քերթ առանձնաշնորհեալ ցեղերէ, դարերէ իվեր կը հայճաւճի և կը շարչարի յանուն քրիստոնէական կրօնի և ազգութեան, մեր պատիւը կեանքը ու ստացւածքը կը բռնաբարին և կը յափշտակին, մեր կրօնը ամէն օր կը հայհոյուի, մեր սրբավայրերը կը քանդուին և հրոյ ճարակ կը լինին, իսկ մենք չենք կարող բողբոյ ձայն իսկ հանել և այս պայմանաց ներքև ներկայ կեանքը այլևս անտանելի դարձած է:

Ուստի դիմելով յոռս Գերապատուութեանը կը խնդրենք որ շնորհ ընէք մեր այն թշուառ ու արգահատելի վիճակը ինչպէս նաև մեր այն գրութեան իսկական թարգմանութիւնը ներկայացնել կեդր. ու նահանգային կառավարութեանց բարձր ուշադրութեան, ինչպէս նաև համմատ ու-

ընչ դրուժին մ'ալ Ամեն. ս. Պատրիարք Տօր ի Ա. Պօլիս և խնդրել հիմնական փոփոխութիւն մը մեր վիճակին, սրով կարողանանք.

1. Ազդիլ իբրև մարդ և իբրև հաւատար քաղաքացիներ այս երկրին մէջ, ընդ հովանեաւ Օսմանեան կայսերական կառավարութեան:

2. Ունենալով պատուոյ, կենաց և ընչից ու հաղորդակցութեան կայսերական բարձր իրատեղով երաշխաւորեալ ապահովութիւն:

3. Անհատի գործած յանցանքի համար երբեք պատասխանատու չճանչցիլ հասարակութիւն:

4. Բացումն Ա. Պօլսոյ և Թիւրքիոյ ու արտասահմանի առևտրական կենդրոններու երկրիս հայ ազգաբնակչութեան համար ևս:

5. Ըստ օրինի պատժուով մարտ 23-ի եղեւնագործներուն և նոյն դէպքի հեղինակներուն:

Երբ մեր վերայիշեալ արդարացի բողոքներուն ու պահանջներուն գոհացում չը տրւի և առանց հետևանքի մնան անոնք.

Այն ատեն շնորհ ըրէք խնդրել կայս. կառավարութեան և ճանապարհներ բանալ սալով զմեզ այլուր գաղթեցնելու միջոցներ ձեռք առնել ու գործադրել:

Մենք խորին յարգանքով  
Վանայ հայ ժողովուրդ  
(3500 usnraqrouph իւն)

1908 Ապրիլ 10 | 23.

### ՍՕՅԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ՍՕՅԻԱԼԻՍՏԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Վ Ե Ր Ջ Ի Ն Ն Ա Մ Ա Կ

Կուզէի իմ յօգւածների վերջում կանգ առնել այն քաղաքական պահանջների վրայ, որ առաջադրում է մեր կուսակցութիւնը:

Մենք անհաշտ հակառակորդներ ենք կամայական պետութեան: Մենք ջերմ կողմնակիցներ ենք իրաւական պետութեան:

Բայց ի՞նչ են կամայական պետական կարգերը և ինչով են տարբերում նրանք իրաւական կարգերից:

Իրերը յաճախ սքանչելի կերպով ըմբռնելի են համեմատութեամբ փորձենք ուրեմն կիրառել ուսումնասիրութեան համեմատական մեթոդը, — եղրակացութիւնները կը գան արդէն իրենք իրենց:

«Պետութիւնը — ես եմ!» ասել է մի անգամ Փրանսիական միահեծան թագաւոր Լուիօլիկոս XI V, Եւ նոյնը կարող էին ու կարող են ասել իրենց մասին բոլոր երկրների ու ժողովուրդների միահեծան հրամանատարները — թագաւորներ, կայսրներ, սուլթաններ, բողոքականներ և այլն:

Միահեծան պետը ինքն և օրէնք է, և իշխանութիւն և դատաւոր:

Նա կանգնած է օրէնքից դուրս, բանի որ նա ինքն է հրատարակում և կեանքի մէջ մտցնում օրէնքները: Օրէնքը — դա նրա սեփական կամքն է, սեփական քմահաճոյքը, յաճախ անմիտ ու յանցաւոր քմահաճոյքը:

Նա չի եւն թարկւում ոչ մի իշխանութեան, քանի որ նա ինքն է գերագոյն, ոչնչով չը սահմանափակած պետական իշխանութիւնը, բոլոր

միւս իշխանութիւնները բլխում են նրանից, բոլորը հնազանդ են նրա հրամաններին, բոլորը կատարում են նրա սուրբ կամքը:

Նա չի եւն թարկւում ոչ մի դատատանի, որովհետեւ նա ինքն է երկրի բարձրագոյն դատաւորը: Դատաստանական կանոններն ու օրէնքները — նրա անձնական կամքի ստեղծագործութիւնն են, իսկ դատաւորները՝ կամ նրա սեփական ընտրեալներն են կամ նրա ընտրեալների ընտրեալները:

Ուստի ուրեմն, անսահման միապետի համար գոյութիւն չունի ոչ մի անփոփոխ սուրբ պարտականութիւն. իսկ այդպիսի մի միապետի «Տըպատակները» չունին ոչ մի իրաւունք, անխախտելի ու սուրբ իրաւունք:

Այդ — առաջինը: Իսկ յետոյ՝ ահա թէ ինչ: Անսահման միապետը ինչպէս արդէն տեսաք, ամփոփում է իր անձնաւորութեան մէջ երեք տեսակ իշխանութիւն. օրէնսդիր, գործադիր և դատատանական:

Այդ բոլորը, սակայն — խօսքով միայն: Իսկ իրօք «Թագաւորական ծառաներն են» կամ չինօվնիկներն են, որ թէ օրէնքներ են ստեղծում, թէ երկիրն են կառավարում, և թէ դատ ու դատաստան են անում:

Ամեն մի չինօվնիկ, սկսած գեներալ-նահանգապետից մինչև յետին ոստիկանը, գործում է իր տեղում միապետական ից և գործում է իբրև ինքնիշխան, անսահման պետ, մի փոքրիկ ցար՝ իր շրջանում: Դրանք բոլորը «Աստուծոյ ողորմութեամբ» փոքրիկ ինքնակալներ են և նրանց «բարձր կամքի» առջև պէտք է խոնարհւիլ նրանց իշխանութեան սակ գաւազնա հասանդների, գաւառների ու շրջանների «Հպատակները», դրանք բոլորը «Արարչի կամքով» փոքրիկ միապետներ են, ուստի և նրանց անսահման իշխանութիւնը հանդիսանում է, իբրև մի մասնիկ այն բարձրագոյն իշխանութեան, որի կրողն է «մեծ», անսահման միապետը:

Այդպիսով միապետ ինքնակալութիւնը իրօք փոխարինում է չինօվնիկների ինքնակալութեամբ, որոնք կազմում են իսկական կառավարութիւնը. այդպիսով անսահման միապետութիւնը վերածւում է կամայական, ոստիկանական պետութեան, ուր թէ իշխանութիւնը և թէ օրէնքը գաւազնում են բիւրօկրատիայի այսինքն չինօվնիկների, կազմակերպւած վոհմակի ձեռքում:

Կամայական պետութեան մէջ ամբողջ ազգաբնակչութիւնը բաժանւում է երկու բանակների, անհաւատար իրենց թւով ու դիրքով: Մի կողմը «լիազօր իշխանութեամբ» օժտւած բիւրօկրատիան է, գլուխ ունենալով միապետին, միւս կողմը — իրաւազուրկ ժողովուրդը, մէկ բանակում — օրէնգիրները, կառավարիչներն ու դատաւորները, միւսում — հաւատարիմ հպատակները, որոնց ստիպում են հնազանդել և պատժում են անհնազանդութեան համար: Մի կողմում — աստուածային մատով նշանակւած «Տովիւնները» միւսում — չլու մարդկային Տօրը...

\* \*

«Պետութիւնը — դա ամբողջ ժողովուրդն է: Օրէնքը — ամբողջ ժողովրդի կամքն է: Պետութեան գերագոյն իշխանութիւնը — ամբողջ ժողովրդի իշխանութիւնն է»: Այդպէս յայտարարում են ոչ թագաւորները, կայսրները...

րը, սուլթանները, բողոքիսանները, ոչ էլ նրանց ստրկա-  
միտ համախոհները այդպէս յայտարարում է ժողո-  
վուրդների բարձրագոյն իմաստութիւնը—գիտութիւնը:  
Այդ է, որ պէտք է դուրս իբրև հիմք, խորիսխ իրա-  
ւակա՞ն պետութեան:

Իրաւական պետութեան մէջ օրէնս-  
դրութիւն է ինքը ժողովուրդը, նա անում է  
այդ կամ ուղղակի, ձայն տալով յօգուտ կամ դէմ  
որեւէ օրէնքի\*, կամ թէ անուղղակի իր ընտրեալ  
ներքի միջոցով: Սովորաբար գործադրում է օրէ-  
նագրութեան վերջին ձևը: Գուրբ երևի գիտէք արդէն,  
ինչու՞ն է կայանում նա:

Պետութեան տարիքաւոր ազգաբնակչութիւնը քւէար-  
կութեամբ ընտրում է երկրի «լաւագոյն մարդկանց»  
կամ պատգամաւորներին, որոնց յանձնում է իր իրա-  
ւունքը՝ օրէնքներ մշակելու: Ժողովրդական այդ ընտ-  
րեալները կամ ներկայացուցիչները բոլորը  
միասին կազմում են այն ժողովը, որ պանագան երկր-  
ներում պանագան անուններ ունի, մի տեղ նա կոչւում  
է պարլամենտ, մի տեղ ըստիստագ, Ռուսաստանում—  
Պետական Գումա: Պատգամաւորներն այդ  
ժողովը կամ պարլամենտը հանդիսա-  
նում է օրէնսդիր իշխանութիւն՝ իրա-  
ւական պետութեան մէջ:

Այդ է յիշեալ պետութեան ամենաբնորոշ յատկու-  
թիւններից մէկը: Ահա մի ուրիշը:

Իրաւական պետութեան մէջ ոչ միայն քաղաքացի-  
ները այլ և կառավարութիւնը (գործադիր իշխանու-  
թիւնը) և արդարագատութիւնը (դատաստանական իշ-  
խանութիւնը) պարտաւոր են հնազանդել այն օրէնքներին  
որոնք հրատարակում են պարլամենտի կողմից, պար-  
տաւոր են գործել համաձայն այդ օրէնքներին, ուրիշ  
խօսքով՝ այդ տեղ գործադիր և դատաստան-  
ական իշխանութիւնները են թարկ-  
ւած են օրէնսդիր իշխանութեան:

Այդ է լաւագոյն միջոցը՝ ապահովելու քաղաքացի-  
ների թէ կառավարութեան և թէ դատաւորների կա-  
մայականութիւնից:

Ոչ մէկը իրաւական պետութեան չինովնիկներից,—  
լինի դա թէկուզ առաջին մինիստրը, իրաւունք չունի  
անցնել օրէնքով իրեն տրւած իշխանութեան սահ-  
մաններից, ոչ մէկը իրաւունք չունի գործել օրէնքի  
հակառակ Նրանք բոլորը, մինչև մինիստրները պար-  
տաւոր են պատասխան տալ պարլամենտի առջև, բոլորն  
էլ կարող են դատի ենթարկել և հետևեցել պաշտօնից  
օրէնսդիր իշխանութեան, այսինքն պատգամաւորական  
ժողովի կամքով:

Փոքր ինչ տարբեր հանգամանք ունի դատաստանու-  
կան իշխանութիւնը: Գառաւարկութիւնը իրաւական պե-  
տութեան մէջ կազմակերպում ու կատարում է այն  
օրէնքների հիման վրայ, որ մշակած են ժողովրդական  
ընտրեալների ձեռքով: Թոյլ չի տրւում ոչ մի շեղում  
այդ օրէնքներից: Չը կայ ոչ մի արտակարգ, անօրինա-  
կան դատ, ամենքն էլ ենթակայ են հաւասար դատաս-  
տանի, ամենքը դատուում են միևնոյն օրէնքով:

Սակայն, ենթարկելով պարլամենտի մշակած օրէնք-

\* Տես լեռն:

ներին, դատաստանական իշխանութիւնը (դատարանը,  
դատաւորները) միևնոյն ժամանակ բոլորովին ազատ են  
գործադիր իշխանութեան ամեն տեսակ միջամտութիւն-  
ներից: Գառաւորները չեն ենթարկւում կառավարական  
չինովնիկներին, նրանք ոչ մի կախումն չունին մինիստր-  
ներից, նահանգապետներից և չեն էլ կարող ունենալ  
քանի որ երբեմն հարկաւոր է լինում դատել հէնց այդ  
մինիստրներին ու նահանգապետներին: Իսկ անառարկէն  
դատելու համար, պէտք է կատարելապէս անկախ լինել,  
պէտք է ականջ դնել սեփական դատողութեան ձայնին  
և սեփական խղճի հրահանգներին:

Ուրեմն գուրագրելով կամայական պետութիւնը իրա-  
ւականի հետ, կարող ենք ասել հետևեալը:

Կամայական պետութեան մէջ կառավարողները հան-  
դիսանում են միաժամանակ և օրէնսդիրներ և դատա-  
ւորներ: Իսկ իրաւականի մէջ կառավարչական իշխանու-  
թիւնը գատուած է օրէնսդիր ու դատաստանական իշխա-  
նութիւններից:

Կամայական պետութեան մէջ կառավարութիւնը  
օրէնքից դուրս է կամ օրէնքից բարձր և են-  
թակայ չէ դատի, իսկ իրաւական պետութեան մէջ կա-  
ռավարութիւնը գտնւում է օրէնքի տակ և կա-  
րող է իր ամբողջ կազմով նստել մեղադրեալի նստարանի  
վրայ, որովհետև նա ստորագրած է օրէնսդիր իշխանու-  
թեանը և պարտաւոր է անհրաժեշտութեան դէպքում  
պատասխան տալ դատաստանական իշխանութեան առջև:

Կամայական պետութեան մէջ օրէնքը—կառավարող-  
ների կամքն է, իսկ իրաւական պետութեան մէջ օրէնքը  
—ժողովրդի կամքն է:

Կամայական պետութեան մէջ ժողովուրդը—կառա-  
վարիչների ծառան է: Իրաւականի մէջ ընդհակառակը՝  
վարիչները ժողովրդի սպասաւորներն են:

Կամայական պետութիւնը յնւում է ամբողջապէս  
քմահաճութեան ու կամայականութեան վրայ, իսկ ի-  
րաւական պետութիւնը յենւում է օ-  
րէնքի և իրաւունքի վրայ:

\*\*\*

Պարլամենտը—իրաւական պետութեան անպայման  
սեփականութիւնն է: Բայց արդեօք հետևում է դրանից,  
որ ամեն մի պետութիւն, որ ունի պարլամենտ, իրա-  
ւական պետութիւն է: Ամենևին:

Նախ պարլամենտները տարբեր տեսակի են. ուսաց  
պետական Գուման նոյնպէս կոչւում է պարլամենտ, ժո-  
ղովուրդական ներկայացուցիչների ժողով: Սակայն, ո՞վ  
չը գիտէ, որ այնտեղ նստած են ոչ թէ ժողովրդի այլ  
դրեթէ միայն ազնականութեան ու վաճառականութեան  
ներկայացուցիչներ\*:

Ապա նկատենք և հետևեալը.

Կայ պարլամենտ, օրինակ, Գերմանիայում, բայց կայ  
այնտեղ և Ալիշելմ Կայսրը, որ իր քիթը խոթում է  
գերմանական ժողովրդի բոլոր գործերի մէջ: Կան պար-  
լամենտներ և Իտալիայում, և Բելգիայում և Աւստրիա-  
յում, և Անգլիայում, բայց այդ բոլոր երկրներում, ա-  
սես իսկական կամայական պետութիւնների մէջ, բազ-  
մած են իրենց Գահերի վրայ թագաւորներ, կայսր-

\* Չը կայած իր պարլամենտին՝ Ռուսաստանը դեռ այսօր էս  
մնում է սիպիկ կամայական պետութիւն:



ներս որոնք ոչ միայն գրուել են կանգնած գործադիր իշխանութեան, այլ և իրենց բաժինն ունին — երբեմն շատ մեծ բաժինը — օրէնքն երի մշակման գործում:

Իրաւական պետութեան մէջ թագաւորներն ու կայսրները հանդիսանում են կամ արգելք ժողովրդական կեանքի կանոնաւոր ընթացքին, կամ թէ անպէտք մի գորգարանք: Գերմանիայում, օրինակ, կայսրը ուղղակի խոչընդոտ է սնապարծի, ճշման, զղեցուցիչ, յաճախ չարաղէտ մի խոչընդոտ: Անգլիայում թագաւորական իշխանութիւնը ուրիշ ոչինչ է, բայց եթէ խոր հնութեան մի մնացորդ, վաղեմի անցեալի մի փառանգութիւն: Մի հանգամանք — որ խիստ կարեւոր է պետութեան կառավարման գործում — գեղեցիկ կերպով կը պարզաբանէ մեզ այդ միտքը:

Գերմանիայում մինիստրները գտնուում են կայսրի հրամանատարութեան ներքոյ, Նա է ընտրում նրանց, նա է նշանակում և արձակում պաշտօնից, իր սեփական հայեցողութեամբ: Եւ նրանք էլ գործում են կայսրի անունից ու նրա հրամանով: Նրանք վերջին հաշւով կատարում են կայսրի կամքը և ոչ ժողովրդական ընտրեալներին: Մենք Նորին մեծութեան մինիստրներն ենք և ոչ ձեր — ասել է մի անգամ հռչակաւոր Բիսմարկ, դիմելով գերմանական պարլամենտի պատգամաւորներին: Եւ նրա խօսքերի մէջ արտայայտել է կատարեալ ճշմարտութիւնը: Գերմանիայում ժողովրդական ներկայացուցիչները չունին իշխանութիւն մինիստրների վրայ: Լաւ են թէ վատ այդ մինիստրները, վարժւում են նրանք իրենց յանձնած գործերը յօգուտ թէ ի վնաս գերմանական ժողովրդի — այդ միևնոյն է. ժողովրդական ներկայացուցիչները պիտի հանդուրժեն նրանց, թէկուզ ատամների կրճատցով, պիտի հանդուրժեն, բանի որ միմիայն կայսրը կարող է արձակել նրանց պաշտօնից:

Այդպէս չէ Անգլիայում: Այնտեղ մինիստրները դիմելով թագաւորին, կարող կը լինէին համարձակ ասել նրան. «Մենք ձեր ծառաները չենք, այլ պարլամենտի»: Եւ այսպէս ասելով, նրանք միանգամայն իրաւացի կը լինէին Արդարեւ Անգլիայում «մինիստրների կաբինետը» կազմուած է այնպիսի մարդկանցից, որոնք Աստահութիւնն ու յարգանք են վայելում պարլամենտի անդամների մեծամասնութեան մօտ: Այդտեղ մինիստրները կատարում են ոչ թէ թագաւորի կամքը, ոչ իսկ իրենց սեփական կամքը, այլ օրէնսդիրների, այսինքն ժողովրդական ընտրեալների կամքը: Եթէ նրանք որեւէ պատճառով շեղուած են իրենց պարտաւորութիւնների կատարումից, եթէ նրանք յանկարծ որոշում են իրենց քեֆով վարել երկրի ճակատագիրը, հակառակ պարլամենտին և սահմանած օրէնքներին — նրանց անմիջապէս հրաւիրում են պատասխանատուութեան և ընդհարման դէպքում մինիստրները պէտք է հրաժարական տան:

Ի՞նչ է հետևում այդ բոլորից: Ար պատասխանեմ կարճ կերպով: Ոչ ամեն պետութիւն, ուր կայ պարլամենտ, իսկական իրաւական պետութիւն է: «Սահմանադրական միապետութիւնների» մէջ կան պարլամենտներ, այդ բառի բուն իմաստով: Անգլիան հաշիւ չէ, բանի որ այնտեղ թագաւորի իշխանութիւնը գրեթէ հասցրած է գէրօի: Գա իսկական իշխանութիւն չէ, այլ իշխանու-

թեան արտաքինն է միայն, երևոյթը: «Սահմանադրական միապետութիւնը, իսկապէս ասած, մի խառնուրդ է, մի ծնունդ կամայական և իրաւական պետութեան զուգորդման Գա մի ամալգամ է՝ հին, ստրկական և նոր ազատական սկզբունքների: Գա մի երկհիմունք պետութիւն է, որի մէջ «Նորին Մեծութեան կամքը» հակադրւած է «ժողովրդի կամքին»: Իսկական իրաւական պետութիւնը — քա ժողովրդապետութիւնն է, ուր ինքը ժողովուրդն է «Նորին Մեծութիւնը»...

\*\*\*

Իսկական ժողովրդապետութիւնը (նամկավարական հանրապետութիւն) դեռ ոչ մի տեղ չէ իրագործւած: Հիւսիսային Ամերիկայի, Աւստրալիայի և Շվեյցարիայի միացեալ նահանգները մի խոշոր չափով մօտեցել են այդ ժողովրդապետութեան. սակայն, բարոյական կարգերի այդ առաւելապէս արդար ու խելացի ձևի լիակատար իրականացումը — ապագայի գործ է:

Ի՞նչ է նշանակում իսկապէս ժողովրդապետութիւն: Երևակայեցէք մի երկիր, ուր ժողովուրդը իրաւունք ունենար ասելու. «այստեղ ես տէր եմ, այստեղ ամեն բան դրօշմած է իմ կամքի կնիքով»: Ահա մի այդպիսի երկիր մենք կատարեալ իրաւունքով կ'անւանէինք ուսմ կազմարկան հանրապետութիւն, (ժողովրդապետութիւն):

Իսկ ի՞նչ կը գտնէինք մենք այնտեղ: Նախ, իհարկէ, մի օրէնսդիր ժողով. բարկացած ժողովրդի ճշմարիտ ընտրեալներից: Ընդգծում եմ «ճշմարիտ» բառը, որովհետև ուսմկավարական հասարակապետութեան մէջ պատգամաւորները պիտի ընտրւին երկրի բոլոր անդամների տարիքաւոր բնակչութիւնը — ոչ միայն տղամարդիք, այլ և կանայք:

Երկրորդ. ուղարկելով իր պատգամաւորներին պարլամենտ, ուսմկավարական հասարակապետութեան բնակչութիւնը պիտի տայ նրանց հրահանգներ, նա կ'ազն եր, ուր շեշտւած պիտի լինի այս կամ այն նոր օրէնքների մշակման անհրաժեշտութեան վրայ, այս կամ այն նոր կարգերը մտցնելու մասին: Նշանակում է՞ դա արդեօք, որ ուսմկավարական հանրապետութեան պատգամաւորները չեն կարող օրէնքներ մշակել սեփական նախաձեռնութեամբ: Իհարկէ, ոչ, ոչ դք չի կապում նրա ձեռքերը. բայց ժողովրդի ընտրեալները պէտք է լաւ յիշեն իրենց տրւած հրահանգները, նրանք պէտք է ամեն կերպ աշխատեն, որպէսզի կատարել իրենց զրկող բնակչութեան ցանկութիւնը. ապա թէ ոչ՝ նրանք պատասխանատու են ընտրողների առջև, եթէ անհոգ ու անտարբեր յայտնւին դէպի բնակչութեան կարիքները, եթէ մոռանան նրանց կամ, որ ամենից վատնէ, եթէ դաւաճանեն իրենց խոստումներին:

Տարով իր ընտրեալներին իրաւունք՝ օրէնքներ մշակելու, ուսմկավարական հանրապետութեան բնակչութիւնը իրեն և ս վերապահում է նոյն իրաւունքը: Ուրիշ խօսքով՝ օրէնսդրական նախաձեռնութիւնը այդտեղ պատկանում է ոչ միայն պարլամենտին, այլ և ազգաբնակչութեանը: Եթէ բնակիչների մի որոշ թիւ հարկ տեսնէ փոխել գոյութիւն ունեցող օրէնքներից որեւէ մէկը կամ բոլորովին ոչնչացնել մի անպէտք օրէնք կամ թէ վերջապէս, մտցնել նոր օրէնք — պար-

լամենար պարտաւոր է զբաղել այդ հարցով: Սակայն, ունինք էլ որ բզկե օրէնսդրական նախաձեռնութիւնը, ժողովրդից, թէ նրա ընտրեալներից՝ իւրաքանչիւր մի օրէնք, մի կարգաւոր անօրինութիւն, քանի որ նա վերաբերում է ամբողջ բնակչութեանը—պէտք է ենթարկել այդ վերջինի դատին: Աւերջին խօսքը այդտեղ պատկանում է ժողովուրդին: Նրա «այոն» կամ «ոչն» էլ որ վճռում է վերջնականապէս՝ լինի՞ օրէնքը, թէ չը լինի:

Ուրեմն մեր ենթադրած իրաւական պետութեան մէջ պէտք է լայնօրէն գործադրել մի շարք հիմնական կանոններ, առանց որոնց անհնարին է ձգտել ժողովրդապետութիւնը: Այդ կանոններն են՝

- ա) Ընդհանուր ընտրողական իրաւունք, առանց սեռի խտրութեան:
- բ) Օրէնսդիր իշխանութեան առաջնութիւն (զլիսաւորութիւն):
- գ) Գործադիր իշխանութեան պատասխանատուութիւն օրէնսդիր իշխանութեան առջև:
- դ) Գատաստանական իշխանութեան անկասկածիւն:
- ե) Հրահանգներ պատգամաւորներին և նրանց պատասխանատուութիւնը ընտրողների առջև:
- զ) Ժողովրդի օրէնսդրական նախաձեռնութիւն (Initiative populaire):
- է) Ուղղակի օրէնսդրութիւն՝ համաժողովրդական խորհրդակցութեամբ (Referendum):

Ահա այդ հիմնական կանոնների կատարումով է, որ հնարաւոր է քաղաքական և քաղաքացիական ազատութիւնը:

Ժողովրդապետութիւնը—բաղձալի ապագան է: Պէտք է դիմել նրան անյողողփ բայց և զգուշաւոր քայլերով, որպէսզի հին շղթաների տեղ՝ նորերը չը կուենք: Պէտք է մտցնել նրան կեանքի մէջ խելացի կերպով, լաւ իմանալով, թէ ինչն է այժմ արդէն իրագործելի և ինչն է յետագայի աւելի յարմարաւոր ապագային:

Սակայն, ինչ որ էլ լինի, յամենայն դէպս մի վայրկեան անգամ չը պէտք է մոռնալ, որ ժողովրդապետութիւնը կառավարութեան ոչ միայն առաւելագէտ ցանկալի ձևն է, այլ և առաւելագէտ նպատակայարմարը՝ անհատի ազատ ու ներդաշնակ զարգացման տեսակետից: Թող նա միշտ կանգնած լինի ձեր առջև պայծառ լուսատու փարոսի պէս: Թող նա լուսաւորէ դժուարին ու ստատակոտ ճանապարհը, որ տանում է դէպի ձգտարտութեան ու ազատութեան թաղաւորութիւնը: Այդպիսի փարոսով դուք չէք մոլորելի...

\*\*\*

Այս նամակով ես վերջացնում եմ իմ համառօտ լուսաբանութիւնը «Գաշնակցութեան նւագադոյն ծրագրի»: Կուզէի, սակայն, մի բանի խօսք ևս աւելացնել, իբրև եղբակցութիւն:

Գերմանական աշխատաւոր ժողովրդի ամենաականաւոր առաջնորդներից մէկը, Լասոալ դրել է մի տեղ. «Եթէ ես լինէի տիեզերքի ստեղծագործողը, ապա այնպէս կը սահմանէի, որ նրա մէջ Իրաւունքը քայլեր Ուժի առջևից... Տարբախտաբար, իրականութեան մէջ, Ուժն է միշտ գնում Իրաւունքի առջև, գնում է մինչև այն ժամանակ, երբ Իրաւունքը ամբարեկով իր մէջ բա-

ւականաչափ ուժ՝ օդը կը ցնդեցնէ անիրաւութեան ուժը»:

Այդ սքանչելի խօսքերը պէտք է նշանաբան լինի ամեն մի յեղափոխականի Պէտք է համախմբել ուժերը այն նոր իրաւունքի շուրջը, որով աշխարհ է դալիս սօցիալիզմը, Պէտք է պայքարել այդ նոր իրաւունքի համար: *Nur der Verdient sich Freiheit wie das Leben, Der täglich sie erobern muss!*

«Միմիայն նա է արժանի ազատութեան ու կեանքի, որ ամեն օր պէտք է ուժով նւաճէ այն»...

Այսպէս է ասում մեծ Գեոտէն և մենք պատրաստ ենք ձայնակցել նրան:

Այո՛, միայն անուշ կուռի միջոցով է, որ աշխատաւոր ժողովուրդը բաց կանէ ճանապարհը դէպի լուսագոյն ապագան, կը մաքրէ, կը լայնացնէ և կը գայ վերջ ի վերջոյ՝ «աշխատանքի ազատութեան» այն աշխարհը, որի մասին ես խօսել եմ իմ առաջին նամակում:

Բայց որպէսզի այդ կուռը լինի ալգուլ արդասաւոր—միանգամ ևս շեշտում եմ—կուռոյներին անհրաժեշտ է դառնալ Ուժ, որովհետև այն ժամանակ միայն նրանք կարող են արմատից ոչնչացնել ապիրաւութիւնը և վերաստեղծել նոր, արդար Իրաւունքը—իրաւունք բոլոր մարդկանց համար՝ զգալու իրենց որպէս մարդ, մտածելու ազատօրէն և գործելու ազատօրէն: Իսկ Ուժը միութեան մէջ է, Ուժը—գիտութեան մէջ է, բարոյական մաքրութեան մէջ, զւարթութեան մէջ, վճռականութեան, անվեհերութեան մէջ:

«Աշխատանքի ու ազատութեան» գալոց աշխարհում՝ և՛ ուժը, և՛ իրաւունքը պիտի լինին աշխատանքի ու գիտութեան մարդկանց կողմը: Այդ աշխարհը գալու է: Նա լինելու է: Իսկ առ այժմ... պէտք է կուռեր:

(Վ. Ե. Ր. Ջ.)

Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ

ՊԱՐԼԱՄԵՆՏԱՐԻՉՄ ԵՒ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Այդպիսով մի նոր ճանապարհ, մի նոր ուղղութիւն բռնեց եւրոպական սօցիալիզմը 70-ական թւականներից ի վեր, երբ նա սկսեց քարոզել արդէն բացարձակապէս, հրապարակօրէն՝ մի շարք արեւմտեան մեծ պետութիւնների մէջ: Ազդեմի ուտօպիան յաղթահարւած էր, այն լսանդաւառ ու կարմիր իդէալիզմը, յեղափոխական այն ցառկոտ ուղին, որով սողորւած էր սիլեբնական մաքրիզմը՝ միշտ աւելի և աւելի տեղի տւեց ընդհատական զգաստ ու խոհեմ աշխարհայեցութեան. կատաստրօֆայի դուռ, շահաւալի մարդարեւութիւնները, որ հնչում էին 40-ական ու 50-ական թւականներում՝ վերջ ի վերջոյ, իրերի անտարբարամբանութեան զօրութեամբ, վերածւեցին ընտրողական խաղաղ պայքարի, պարլամենտարիզմի, օրինականութեան (la legalite):

Ինչ թունաւոր հեղինակ էր ծորում այդ «օրինականութեան» հասցէին Կարլ Մարքսի զօրեղ գրչից, երբ նա գրում էր 1847-ին իր պատասխանը Պրուդօնին—«Փիլիսոփայութեան թշուառութիւնը» խորագրով գիրքը: Ինչ անուշ, արեւնահեղ սօցիալական պատերազմներ էր գուշակում նա մօտիկ ապագայի համար... Պատերազմներ՝ ուր նրա ասելով, պրօլետարը «ուրիշ ոչինչ չը պիտի կորցնէր, բայց էթէ միայն իր շղթաները» («սոսկոնիստական մանիֆեստ»)... Եւ միւս կողմից մտաբերեցէք Էնգելսի խոստովանութիւնը 90-ական թւերի սկզբում, ուր մարքսիզմի ծեր

վետերանը Նատագուվում էր նոյն օրինակում թիւնը, որը նրա կարծիքով բարրիկազնեից ու ճակատամարտներից աւելի ազդու և արդասաւոր յիշատակում էր Օդելիօն Բարբոյի հուշակաւոր խօսքը՝ «la légalité nous tue!» (օրինականութիւնը սպանիչ է իշխող դասակարգերի համար):

Ահա թէ ուր յանդէպ նախկին մտերմութեան, ահեղ կատաղութեան վարդապետութիւնը:

Այդ հսկայական թուիչքը ևս կատարեց ատտիճանաբար Եօթանասնական թուականների սկզբներին, երբ Ֆրանսիայում ու Գերմանիայում աշխատաւոր դասակարգը իբրև արդէն կազմակերպւած ու դիտակից մի մարմին, նետուած էր դործօն կերպով քաղաքական ասպարէզ և զբիւում էր իր յատուկ ներկայացուցիչներին պարլամենտ (Գերմանիայում արդէն 1868 թւից) — դեռ ուժեղ էին մարքսիստական հին տրագիկանները բանւորական շարժման յայտնի զեկակարները մէջ: Այդ տրագիկանները, չը նայած «կոմունիստական մանիֆեստի» մի յայտարարութեան՝ սուղուած էին ընդհանրապէս խոր կատաղի անհաշտութեան ոգով (intransigence), մի անվերածելի թշնամութեամբ դէպի բուրժուազական բոլոր ֆրակցիաները, կուսակցութիւնները: Մարքսիստական ուղղափառ դպրոցը պահանջում էր բանւորական սոցիալիստական կուսակցութիւնից բռնել միշտ դիմադրական դիրք, ցոյց տալ սխտեմատիկ օպպոզիցիա բուրժուազական կուսակցութիւններին ու կառավարութիւններին և ոչ մի կ'մպրօմիսի, ոչ մի իրաւատնութեան մէջ չը մտնել այդ կուսակցութիւնների հետ սրէ նախաձեռնութեան, ընթացիկ առթիւ, որ և ընտրական պայքարի միջոցին: Ուղղափառներին շատ քիչ էին հետաքրքրում մասնակցի նախաձեռնութեանը, որոնք կարող էին յայտնի չափով բարձրացնել աշխատաւոր ընդհանրութեան աննախաձեռնելի վիճակը: Նրանց կարծիքով այդ տեսակ ընթացիկները կարող էին միայն բարձրացնել իշխող դասակարգի հմարը պրօլետարիատի աչքում և թուլացնել դասակարգային կուսակցութեան տեսքը: Նրանց ցանկալի էր ըստ կարելոյն խորացնել անդունդը երկու մեծ դասակարգերի միջև, որպէսզի հէգելեան հակադրութիւնների օրէնքով, ըստ կարելոյն շուտ պայթի վերջնական ու փրկարար «կատաստրօֆ», — սոցիալական յեղափոխութիւնը: Արեւապէս, նրանք դաւանում էին այն համոզմունքը, որ բանւորների տնտեսական վիճակը բարձրացնելը, նրանց բարեկեցութեանը ներկայ կարգերի մէջ նպատակը դէմ է դիտակցելոյն ճակատագրական, երկաթէ բռնքին, որը Մարքսի բերանով յայտարարել է մի անգամ ընդ միշտ, որպէս անստան ճշմարտութիւն՝ թէ թշուառութիւնը աշխատաւորական բոլոր խաւերում զնալով միշտ աւելի ու աւելի աստիճանաբար է, յուսահատական և միանգամայն սպանական կերպարանք է առնելու և որ հէնց այդ խոր ու յուսահատական թշուառութեան անդունդներից մի գեղեցիկ օր բռնկելու են աղատարար կայծակներն ու որսուումները... Այս, ուղղափառ դոգմայապաշտ աշակերտները դեռ կրկնում էին պատգամի պէս ուսուցչից ժառանգած «ատտիճանական թշուառացման թէօրիան» (Die Verelendungstheorie), որ մարքսիզմի խոշոր մուրուսութիւններից մէկն է, — այսօր, բարեբախտաբար, նոյնպէս արդէն յաղթահարւած:

Բեֆօրմները կարևորութիւն չունէին, որքան վատ, այնքան լաւ, — այսպէս էր հնչում նշանաբանը Վուազոյն էր, ուրեմն, փակել անհաշտ օպպոզիցիայի մէջ, և սպանել մինչև որ կապիտալի սրարշաւ կենտրոնացումով, ազգաբնակչութեան միջին շերտերի պրօլետարացումով, պրօլետարիատի ատտիճանական թշուառացումով, հակադրութիւնների սուր ու ցաւազին բախումներով՝ կը դայ սոցիալական մեծ յեղափոխութիւնը, որ միանգամից կը տայ պրօլետարիատին, ամբողջ ճնշւած ու կեղեքւած մարդկութեանը լիակատար ազատութիւն ու բարօրութիւն...:

Բոլորը — միանգամից, «բոլորը կամ ոչինչ»... Այսպէս էր հնչում մի ուրիշ նշանաբան: Բեֆօրմները անարժէք էին, նոյնիսկ վնասակար, նրանք միջանցում էին պրօլետարիատի դասակարգային դիտակցութիւնը, բուրժուազական նոյնիսկ դամկալար ֆրակցիաների հետ կրակախօսելը վտանգաւոր

էր, նա խախտում էր պրօլետարիական դոգմայի կրկնութիւնը... Մնում էր միայն դեղերել բացասական դիրքում, աճեցնել շարքերը և ձգտել «պրօլետարիատի յեղափոխական դիկտատուրայի», որ ամեն բան կը տայ մի անգամից:

Որպիսի փոփոխութիւն այն ժամանակից իվեր... Կատմութիւնը շտկեց այդ բոլոր մարտկոցները: Իրականութեան անթիւ դասերը ակներևօրէն ի ցոյց դրին թէ դոգմայի և թէ տակտիկի հիմնական վրիպումները և այսօր ամբողջ աշխարհի բազմադաւան սոցիալիստական բանակը, իր մէջ ունենալով նախկին մուշտանդ մարքսիստներին, առաջ է ընթանում դէպի մեծ իդէալը այն ճանապարհով որ միակ հնարաւորն է, միակ խելացին ու նպատակայարմարը: Հրաժարի՛մք ատացին և՛ պրօլետարիալայի թէօրիային, և՛ թշուառացման դաւանանքին, և՛ այն վանական ամուլ փակւածութեան ու կղզիացման, որ քարոզւում էր վաղեմի օրերում:

Բեֆօրմները հուշակեցին, իբրև անհրաժեշտ և ստիպողական, Իբրև անհրաժեշտ նախաձեռնների մի շարք, որ պիտի ձգէ յիսկալի կամուրջը ներկայ և դալոց հասարակութիւնների միջև: Իբրև անհրաժեշտ նախաձեռնների մի շարք, որով կարելի է մի յայտնի ատտիճան թեթիւացնել աշխատողների տնտեսական լուծը և դրանով իսկ հրապուրել նրանց... Որովհետև, որքան էլ անձնուրայ և դաղափարական լինի աշխատաւորը, նրան աւելի հետաքրքրում է իր ներկայ վիճակը բարձրացնելու հարցը, քան դալոց դրախտի երանութիւնները: Բեֆօրմները անհրաժեշտ էին, վերջապէս, նոյնիսկ պրօլետարիատի քաղաքացիական հասունացման տեսակետից: Մի դասակարգ, եթէ նա յուրեքօրէն խրաւժ լինի նիւթական կարտուրութեան մէջ, պաշարւած սուօրէն կենսիկ զնուծ ու դառն մտահոգութիւններով՝ չի կարող հասնել զանգւածօրէն քաղաքացիական կորովի ինքնագիտակցութեան, չի կարող դառնալ պիտանի բանակ սոցիալական մեծ յեղափոխութեան համար... Քաղցածները, մերկ, տղէտ ու յուսահատ թըշուառները չեն կարող առաջ բերել մի այնպիսի հոյակապ յերաշընում, որ նոր վերածնւած կարգերի մէջ պիտի ազատագրէ բովանդակ մարդկութիւնը: Սոցիալիզմի նպատակը չէ բուրժուազիային տապալելով, մի նոր դասակարգ դնել նրա տեղը, մի պրօլետարիատ, մի խաւոր ու բիւր ոյժ՝ որ դայ լիազօր «դիկտատուրայով» իր դեթիին ճնշելու միւս դասակարգերը և յուրեքօրէն տնտեսական հետակարգային կուսակցութեան մէջ, սոցիալիզմի նպատակն է՝ մի անգամ ընդ միշտ ջնջելու աշխարհից դասակարգերը և ստեղծելու ամբողջական, ներդաշնակ համամարդկային դերդաստանը, ուր չը պիտի լինի ոչ առանձնաշնորհում, ոչ ճնշում: Եւ եթէ մենք յայտարարում ենք, որ մի օր աշխատաւոր դասակարգը ապստամբութեամբ կամ խաղող ճանապարհով պիտի տիրանայ քաղաքական դեկլին, պիտի հասնէ բարձալի «դիկտատուրային», անօրինելու համար ամբողջ մարդկութեան ճակատագիրը, ապա մենք դաւանում ենք այն համոզմունքը՝ այդ դիկտատոր դասակարգը պիտի անպայման կանգնած լինի իր մեծ, գիտն առաքելութեան բարձրութեան վրայ... Այլապէս աշխարհը պիտի տեսնի մի այնպիսի արհաւիրակ քաոս, որ պիտի նա տեսած չի լինի երբէք... Ահա այս ճանրակշիւ հանդամանքն է, որ այսօր շեշտուած է յաճախ ու ամենուրեք՝ սոցիալիստական միջազգային դրականութեան մէջ:

Ի նպատակ Բեֆօրմիզմի և օրինականութեան՝ հուշակեց և մի այլ իրողութիւն: Այն՝ որ «բուրժուազիա» կուրած կատեգորիան մի համատարր, միապարտղ ուժ չէ նա. չի ներկայանում իբրև մի ամբողջական բոլի, զանգւած, ներդաշնակ շահերով ու տենչանքներով: Նրա մէջ կան բաժանումներ, շերտաւորումներ: Վան և հրապարակի վրայ, պարլամենտներում այդ շերտաւորումներին համապատասխան կուսակցութիւններ, ֆրակցիաներ: Եւ մենք տեսնում ենք բոլոր տեսակի պարլամենտական երկրներ ի մէջ, թէ ինչպէս այդ ֆրակցիաներից առաւելագոյն արմատականները բազմատեսակ խնդիրներում ցոյց են տալիս համբաշխութիւն աշխատաւորական կուսակցութիւններին:

Միապետական Իտալիայում հանրապետականների ֆրակցիան գրեթէ միշտ ընթացել է սոցիալիստների հետ:

սօցիալ-քաղաքական կարևորագոյն խնդիրները մէջ: Անդ- լիայում ազատամիտ կուսակցութեան արմատական թեւը, Գերմանիայում Freisinnige Vereinigung-ը (ազատ մտածող կուսակցութեան ձախ հատւածը), Süddeutsche Volkspartei (ուսակավարականներ)—նոյնպէս սիստեմա- տիկ համերաշխ քայլեր են արել բանւորական կուսակցու- թիւնների հետ: Նոյնը՝ հանրապետական Ֆրանսիայի ու Շվեյցարիայի բազիկալ կուսակցութիւնները:

Անշուշտ, այդ բոլոր այլանուն Ֆրակցիաները—արմատա- կան, ռամկավար, հանրապետական, freisinnige և այլն— ձեռք մեկնելով աշխատաւորական Ֆրակցիային յանուն մի յայտնի ծրագրի իրականացման, մնում են դարձեալ էս- պէս բ ու ը թ ու և ա զ ա կ ա ն կուսակցութիւններ: Նրանք կանգնած են մնում ժամանակակից կարգերի, մասնաւոր սեփականութեան հողի վրայ, անհաշտ հակաուսկորդ սօ- ցիալիստական կամ կոլլեքտիվիստական հեռւոր իդէալ- ների: Գրա ամենափայլուն ապացոյցը տալիս է այսօր Ֆրան- սիայի արմատական կուսակցութիւնը, իր հռչակաւոր առաջ- նորդի, Ալեմանսոյի իշխանութեան տակ: Այդ վերջինը, մի- նիստը-նախագահ դառնալու օրից ի վեր, յենւելով պարլա- մենտի իր «արմատական» մեծամասնութեան վրայ, սիստե- մատիկ հարձանք է սկսել սօցիալիստների դէմ, շեշտու- մ է ամեն քայլափոխում իր կատարի հակաուսկորդութիւնը սօցիալիստական թէօրիստներին և ձգտում է ամէն կերպ կասեցնել նրանց ընթացքը, առաջադիմութիւնը: Այդ կէ- տում նա քիչ է տարբերում նախորդ պահպանողական, նոյնիսկ à la Meline պահպանողական մինիստրներից:

Այնուամենայնիւ, լինելով հանդերձ անհաշտ հակաու- կորդ սօցիալիզմի վարդապետութեան ու նրա կիրառումնե- րին՝ այդ արմատական կուսակցութիւնը համերաշխ է սօ- ցիալիստների հետ մի շարք այնպիսի խնդիրներում, որոնք ահագին կենսական կարևորութիւն ունին աշխատաւոր ընդ- հանրութեան համար: Ամենակենսական խնդիրներից մէկն է հէնց այդ ազատ, հանրապետական մթնոլորտի պահպանու- մը, որ երէկ թուում էր վտանգւած և որ ազատեց ու բարգաւաճում է այսօր, շնորհիւ բոլոր ձախակողմեան տար- րերի—սօցիալիստների ու ըստիկալների—սերտ, օրինակելի, համերաշխ գործակցութեան: Քիչ բան չեն աշխատաւորա- կան դատի առաջադիմութեան ու բարգաւաճման տեսակէ- տից այն հարւածները, որոնց տակ խորտակեց կղերակա- նութեան ամենի վիշապը, որոնց տակ ընկճեց և գոռոզ, ժողովրդատեսաց միլիտարիզմը Ֆրանսիայում: Իսկ այդ հար- ւածները գլուխ եկան նոյն ձախակողմեան տարրերի գործօն համերաշխութեամբ:

Հնարաւոր է, որ հեռու, անյայտ ապագայում, երբ սօ- ցիալիզմը աւելի սպառնալի կերպարանք կառնէ, երբ կազ- մակերպւած ու մարտական աշխատաւորութիւնը իր ան- դադրում պայքարի մէջ դիրք դիրքի ետեւից գրաւելով, մօ- տենայ իր վերջնական յաղթանակին—հնարաւոր է, ասում ենք, որ այդ կրիտիկական վայրկեաններում այն ձախակող- մեան Ֆրակցիաները—բոլոր այդ ըստիկալները, հանրապե- տականներն ու freisinnige-ները իրենց Ալեմանսոնների, Բարձիլայների ու Բարտերով—դ է պի յ ե տ կ ը ւ ե ն, դէպի յետ շուռ տան իրենց անիւր և միանան յանուն կա- պիտալիզմի ու մասնաւոր սեփականութեան՝ այն յետա- դէմ, պահպանողական Ֆրակցիաներին, որոնք թարգ- ման են ազարանանների, իշնկերների, լորդերի, բոլոր խոշոր կապիտալիստների շահերի... Անհնարին ոչինչ չը կայ սօցիալական դալոց յեղափոխութիւնը ամենադժ- ւարին, ամենակնճուտ պրօցեսն է, որ պիտի ծնէ շատ ահաւոր անակնկալներ: Բայց մինչ այն, մինչ այդ հե- ոու, խորհրդաւոր «դալոց» սօցիալիստական կուսակցու- թիւնները առաջ կը մղեն իրենց մասնակի նւաճումները, ըստ կարելոյն շահագործելով այդ արմատական Ֆրակ- ցիաների արամադրութիւնները:

## Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

ԲԱՂԷՇԻ ՎԻԱՅԷԹԻ ՎԻՃԱԿԸ 1907 ԹԻՒՆ

### II

ԲԱՂԷՇ, 1 Մարտի 1908

Բ ա ր բ ար օ ս ու լ թ իւ ն ն ե ր Պ ու լ ա ն ը խ ի և Մ ա ն ա զ կ ե ր տ ի մ է ջ.—Մուշ զբաղւած գաղթա- կանութեան հարցով և Բաղէշը երկրաշարժի և դրա- մական տագնապների արհաւիրքներով, քիչ հեռուներ, Պուլանըխի և Մանազկերտի մէջ, համիդիէ բերդեր և չէրքէզ գաղթականներ գործ կը դնէին անասելի խժդժութիւններ անօգնական հայերուն վրայ: Խալիդ պէյ անունով համիդիէ գնդապետ մը, արհամարելով իրմէ բարձրագոյն հեղինակութիւնները և ոսնակոխե- լով ամէն արդարութիւն, ապրիլ ամսու մէջ, ամբողջա- պէս կողոպտեց չէրվանշէյի գիւղը օրցերեկով, տանե- լով ոչխար և եզ ու իւրաքանչիւր տան վրայ տու- գանք դնելով 10 ոսկի և 100 քիւլ ցորեն: Իսկ Սոր- կանի մէջ իր բռնութիւններուն զիմադրող երկու երկ- տասարդներ սպաննեց ոստիկաններու ներկայութեան:

Տարիներէ հետէ հայու արիւնով հսկայացած, հայի կողոպուտներով յաիրացած, և հայ կիները ու աղջիկ- ները անպատեւելէն գազանացած, հազարապետ Ռիզա պէյ (համբաւաւոր Բագախ) մայիսի սկիզբները Մանազկերտի Խան օղլի գիւղում բռնաբարեց երեք անչափահաս քոյրեր 10—15 տարեկան, որոնց կրասերագոյնը մա- րեցաւ անսովոր լլկանքներու տակ: Իկնախօճա գիւ- ղում կողոպտեց մէկ շատ հարուստ հայի մեծաքանակ ցորենը, գոմէշները ու ձիերը:

Մէկ ուրիշ հազարապետ, Սիւլէյման պէյ՝ կողոպտեց Պուլանըխի Եօնճալու գիւղը և ջանաց Լիզ գիւղէն արտաքսել հայերը, իրենց... նոր հայրենիքը, Վովկաս ուղարկելու համար: Չէրքէզները Օդընչար գիւղում փորձ ըրին բռնի գրաւել հայոց եկեղեցին և մզկիթի վերածել, և հայերի դիմադրութեան վրայ դաշուեն- ցին մէկ երիտասարդ և ջարդեցին կնոջ մը գլուխը: Քաղաքում չէրքէզները բռնի տարին հայերի խոտն ու յարդը և դիտապաստ գետին փոսցին իրենց տար- րական իրաւունքները պաշտպանող երկու հայեր:

Եւ այս ամէն յիշատակութեան արժանի նկատուած դէպքերը, միայն երկու ամսոյ մէջ է որ տեղի կունե- նան: Իսլամական վայրագութեան ցանկը աւելի չեմ երկարեր, ջղեր չը ցնցելու համար:

Ս ու լ ու խ ի կ ու ի ը.—Անգամ մը ևս չարա- բախտ Մշոյ դաշտը բոսորացաւ հայ թարմ և ջերմա- ջերմ արիւնով, անգամ մը ևս Արածանին իր սգա- տխուր ափերուն վրայ լսեց որդեկորոյս մայրերու ողբն ու վայնասունը: Մայիսի 27-ին (յունիս 9) պայթեց մի բռուն ու անհամեմատ ուժերու դիւցազնական կռիւ, հայ յեղափոխականներու և հարիւրաւոր թիւրք զօրքերու ու պաշիպօզուքներու միջև: Ինկաւ առիւծա- սիրտ հերոսը, Գէորգ Չավուշը, Սուլուխի մէջ, հարիւ- րապատիկ զօրեղ և նախայարձակ ուժերու ճնշման տակ: Ազատ շուռն է մը քաշեցին ճիպրանցի Իպօն և նմանները, որոնք վերջի տարիներին Գէորգի անունէն և սխրագործութիւններէն սարսափած շատ քիչ անգամ



կը յանդգնէին դուրս գալ իրենց որջերէն: Հերոսը  
ինկաւ և Տարօնը զրկեցաւ իր քաջամարտիկ զաւկի  
ազգած հմայքի բարիքներէն:

Սուրուխի կռիւը անզուգական կռիւ մըն էր. մէկ  
կողմէն Սասունցի հերոսը, իր արիւնշաղախ եղբայրնե-  
րու բողբոխի և վշտերի բեռը ուսերուն վրայ, միւս  
կողմէն թիւրք հազարապետ մը չէրբէզ Էմին աղան,  
մի քաջ և պարտաճանաչ զօրապետ: Ահահաններու շկա-  
հիւնէն երկու քաջներն ալ տապալեցան իրենց փառ-  
քին հետ:

Կուրի հետևանքով անգամ մըն ալ Տարօնի Եղբմը  
փոխեցաւ անմեղ հայերու սպանդանոցի մը և գազանային  
բնազդներէն տարւած մոլեռանդութիւնը խուժեց խա-  
ղաղիկ հայ ազգաբնակութեան վրայ: Գուրս եկան պա-  
շիպողութիւններ Ապրիլըրահիմ անունով աւազակի մը  
առաջնորդութիւնով: 7 հայեր սպաննեցան և մէկ  
քանիներ վիրաւորեցան Սուրուխի մէջ, առեանգեցան  
մէկ քանի կիներ, փախուստի հապճեպին մէջ քանի մը  
երախաներ խեղդեցան Արածանիի մէջ: Գարձեալ 4  
հայեր սպաննեցան Ախճան գիւղի մօտ:

Կուրի յաջորդ օրը Սէյդօյի Եռուստֆի առաջնորդու-  
թեամբ պաշիպողութիւններ յարձակեցան Յրօնքի վրայ  
սպաննեցին 6 հայ և կողոպտեցին գիւղը, տարին բո-  
լոր ոչխարներն ու անասունները: Ահուելի դաւ մը  
պատրաստեցաւ նաև Մշոյ հայերու գլխուն: Յունիս  
20-ին ուրբաթ կէսօրուայ աղօթքէն յետոյ, որոշե-  
ր էր կոտորած սկսիլ շուկային մէջ: Արգէն շուկաները  
գոց էին Սուրուխի կուէն յետոյ անապահովութեան  
պատճառով, և երջու օր առաջ բացեր էր միմիայն  
կառավարչի տեւած անապահովութիւններու և առաջնոր-  
դի յանձնարարութեան վրայ: Պաշիպողներ պատ-  
րաստ էին կոտորածի և կողոպուտի ծրագիրը: Ան-  
պայման դիակներու դէշեր պիտի բարձրանային Մշոյ  
փողոցներում եթէ բարեբախտաբար մէկ քանի ան-  
սանձ զինուորներ, կանխելով որոշեալ ժամը, չը յար-  
ձակէին շուկայում հայերու վրայ և չը վիրաւորէին  
10—15 հոգի: Խուճապը սկսաւ. եկեղեցիներն ու  
վարժարանը փակեցան, և պահ մը կարծեցաւ թէ  
սև օրերը նորէն վերագարձան:

Մինչ Մուշ սոսկալի տագնապը կանցնէր, Գաշտին  
մէջ սանձարձակ վայրագութիւնները կը շարունակէին:  
Սպաննութիւններ և մեծագանգաւ կողոպուտներ Շէյի  
Եռուստֆի մէջ, Պաղուի մէջ (գիւղը ամբողջապէս  
հրդեհեցաւ և 8 հերկերոցի հայեր սպաննուած հոս):  
Մեղիտի, Հերկերտի, Կօտի, Բեթարի, Մառնիկի, Արաղի,  
Ծխաուրի, Ալիճանի, Խարցի, Երիշթիւրի և այլն գիւղե-  
րու մէջ: Ընդամէնը 50 հայ սպաննուած բացի Մշոյ  
վիրաւորեալներէն: Երեք գիւղ ամբողջապէս կողոպուած  
և հրդեհեցաւ, միւսները մասամբ կողոպուած և քան-  
դրուած:

Հունձքերու ժամանակ բացարձակ անապահովութիւն  
կը տիրէր Գաշտին մէջ, շատերու խոտը չորցաւ արե-  
ւին տակ, հունձքերու ժամանակը անցաւ և տնտեսա-  
սապէս քայքայուած հայերուն աւելացան նոր դժբախ-  
տութիւններ, նոր կսկիծներ:

Անկասկած ամէն հայ իր սրտի խորքերում փայ-  
փայանքներով կը սնուցանէ որ Գէորդ Զավուշի արեան  
շիթերէն ծնէին նոր Գէորդներ դրօշակիր հանգիսա-

նալու մորթւող չարչարակիր ժողովրդի գոռ ու ան-  
սահման բողբոխն և միանգամայն արագահաս և վրէժ-  
խնդիր բազուկը հարւածելու անխիղճ և արիւնկղակ  
չարագործները:

ՄՈՒՇ, մարտ 23

Բէակցիան հետզհետէ մեծ չափեր կստանայ: Ղաւթմ\*  
բէկը մեղ համար մութ մնացած պատճառներով հան-  
գիստ կառնէ իր շահատակութիւններէն: Գազանացած  
կառավարութիւնը արտաքին հալածանքները մեղմա-  
ցնել կը ձեռնդնէ ու ներքին պառակտումներ հանելու  
ետեէ է, և շնորհիւ իր ստեղծած քաղաքական տնտե-  
սական վատթար կացութեանը մեծապէս կը յաջողի  
մեղկ ոգիներ որսալու, հակայեղափոխական շարժում-  
ներ յառաջ բերելու և արտաքին ու ներքին միացեալ  
ուժերով յեղափոխութիւնը խեղդելու, կանգնեցնելու:  
Այժմ բանալ գտնուած 300 հայ բանտարկեալներուն  
կը խոստանայ ներում, եթէ անոնք այլևս հրաժարին  
յեղափոխութենէ և համոզեն իրենց գիւղացիներուն  
հետոս մնալ յեղափոխութենէ, տեղ չտալ գործիչնե-  
րուն և հեռացնել զանոնք իրենց գեղերէն:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԵՒՐՈՊԱ, ԱՍԻԱ.—Եւրոպական «հաւասարակշու-  
թիւնը», որ խանգարուած էր Ռուսիոյ պարտութենէն  
իվեր, ինպաստ Գերմանիոյ, նոր մարդեղութիւն կը կրէ:  
Անգլիա դուրս գալով իր «փայլուն կղզիացումէն», որ  
կը կազմէր Մեծն Բրիտանիոյ քաղաքական հաւատարմը,  
իրերու զօրով կը կազմէ «համաձայնութեան» քողարկ-  
ուած ձեւին տակ, նոր համախմբում մը, հակակշուելու  
համար երբեակ դաշնակցութիւնը, որուն կռթնած գեր-  
մանական հեգեմօնիան, սկսած էր վառնալ մ'ըլլալ աշ-  
խարհի անդորրութեան:

Ամենէն աւելի Անգլիան է որ իրաւունք ունի սրտ-  
նելու Գերմանիայէն, որուն տնտեսական և զինուորա-  
կան հսկայ աճումը, մօտալուծ հարւած մը կսպանայ  
իր տնտեսական և առևտրական և ծովային գերակշ-  
ուութեան: Այս երևոյթը, որ կը շօշափէ Բրիտանիոյ  
գոյութեան հարցը, չէր կարելի անտես մնալ, երբ մա-  
նաւանդ Գերմանիոյ համագերմանական մամուլը գոռ-  
գոջ բարձրացուցած է, և գրեթէ ասպարէզ կը կար-  
դայ ամբողջ աշխարհի, և արդէն կը գուշակէ գեր-  
մանական գերիշխանութիւնը Եւրոպայի վրայ:

Անգլիոյ համար կենսական հարց է ուրեմն որ Գեր-  
մանիան շատ չզօրանայ, սակայն, ինչպէս դիտել կուտայ  
թերթ մը, Գերմանիոյ դէմ համաշխարհային հակա-  
կրութիւնը պէտք չէ միայն տնտեսականով բացատրել,  
այլ նաև այն բարոյական պատճառով, որ գերմանա-  
ցիները իրենց կոպիտ, ամբարտաւան, եսասէր ու ա-  
ռուկուլ քաղաքականութիւնով իրենց շուրջը ստեղծե-  
ցին ջղայնտ մթնոլորտ մը:

Մարտ. Ղաւթմի սպանման լուրը անցեալ քով ծանուցուած  
պիտի է:

Գերմանացիք, աւելի լուրջ խորհողները, կզգան այն ստեղծութեան երկակի՝ օղակը որ կը սեղմէ զիրենք, և կը վերագրեն այդ իրենց կայսեր յիմար, յոխորտ և ցատկոտան բաղաբանութեան, որ դէպ անդէպ, «երկակի բուռնքներ» կուղղէ աջ ու ձախ և այսպէս տաղտուկի և զայրոյթի հոգեվիճակ մը առաջ կը բերէ շուրջը:

Տնտեսական մրցումին և իր ցամաքային զօրութեան հետ, երբ Գերմանիա ուղեց նաև խել Անգլիայէն ծովերու տիրապետութիւնը, — «Գերմանիոյ մեծութիւնը ծովերուն վրայ է» — այդ ժամանակ Անգլիան, որ ձեռնպահ էր առաջ, նշմարեց իր հակառակորդին յետին դիտաւորութիւնը և միացաւ Ֆրանսային «սիրալիր համաձայնութիւնով» որ թաքուն և աճուն ուժ մ'ունէր իր մէջ: Երկու երկիրներ յարաբերութիւնները հետզհետէ աւելի սերտացան և ակնյայտնի էր որ ուշ չէր այն օրը երբ երկու պատմական հակառակորդները, իրենց հին հաշիւները մաքրելով, ընդհանուր վտանգին առջև և փոխադարձ շահերու պաշտպանութեան և ընդհանուր աշխարհի խաղաղութեան համար միանային: Մանչի երկու կողմը մտքերը հասունցած և լուսաւորւած էին այս մասին, երբ Ֆրանսայի նախագահը Ֆալիէր մայիս 25-ին, այցելեց Անգլիա, անմասն և ամենաշքեղ ընդունելութիւնը եղաւ իրեն, որ երբէք Անգլիոյ ժողովուրդը ըրած ըլլայ օտար վեհապետի մը:

Էդուարդ Թագաւորը, և նախագահ Ֆալիէր իրենց բաժակաձառերուն մէջ, ուղղակի ակնարկութիւն չըրին «դաշնակցութիւն» բառին, բայց իրենց «համաձայնութիւնը» շեշտեցին և ամրապնդեցին «սեական» և «աւելի սեղմ» մակդիրներով, որ գրեթէ հոմանիշ է իրենց ըմբռնումով, «դաշնակցութեան»:

Գերմանական մամուլը, մանաւանդ ազգայնամոլ թերթերը, ամէն պաղարիւնութիւն և պատաճանաչութիւն կորսնցնելով իրենց «տեւտոնական կատարութիւնը» թափեցին դէպի Անգլիան և Ֆրանսան, որոնք դաշնակցելով կը ձգտէին դաւել Գերմանիոյ ապահովութեան դէմ: Պատերազմաշունչ ոգի մը կար անոնց սպանական տողերուն մէջ, մասնաւորապէս Ֆրանսայի դէմ, որ «կերած ծեծը» մոռանալով կերակրէ դեռ «փոխվրէժը» առնել, և Անգլիոյ հետ դաւակցելով կը փորձէ, ինչպէս կուզէր ընել Տէլքասէն, միջազգային «շրջանակի» մը մէջ խեղդամահ ընել զիրենք: «Պատանդ» պիտի առնենք Ֆրանսան, կը պոռան համագերմանական օրգանները, եթէ երբէք Գերմանիան Անգլիոյ հետ պատերազմի բռնէի: Գերմանիան կը պատրաստուի միջազգային ամէն պատահականութեան, որը անխուսափելի կը նկատէ արդէն:

Անգլիոյ Թագաւորը շուտով կը մեկնի Ռուսաստան, Յարին այցելելու: Երկու դարաւոր հակառակորդներու այդ ցոյցը, մեծ նշանակութիւն ունի, թէ Եւրոպայի և թէ Ասիոյ համար: Միջազգային բաղաբանութեան դաւանանքներու մէջ յեղաշրջում մընէ որ, տնտեսական լայնածաւալ շահերու ընդհարումով, կը կատարուի: Մոյն երբեակ տեսակցութիւնը, նախաբանը կուտայ մեզի, ուժեղ երբեակ դաշնակցութեան մը, — այժմէն «երբեակ համաձայնութիւն» — հակակռեւելու գերմանական երբեակը: Այս պարագային Իտալիոյ դիրքը շատ փափուկ է, ակամայ դաշնակցութեան պարտականութեան և աւանդական բարեկամութիւններու միջև չը գիտեր

ինչ դիրք բռնէ: Իտալիան *combinazione* ներու երկիրն է սակայն և գիտէ իր հաւասարակշռութիւնը պահել:

Անգլիոյ ազատական թերթերը զայրոյթ կը ճարձատեն որ իրենց թագաւորը այցելութեան կերթայ ցարին իբր «թշնամի մարդկայնական և ժողովրդական ամէն գաղափարի, և հովանաւորող սև հարիւրակնեւուն»: «Ողջունել ցարը, կըսէ *Nation*, յայտարարել է թէ մենք անզգայ կը մնանք այս բռնապետութեան տեսարաններուն»: «Նայսերականութեան և բարձր բաղաբանութեան շահերը չեն կրնար գերադասուիլ մարդկութեան համակրանքէն և ժողովրդական սկզբունքէն», կըսէ «*Daily News*»: Նոյն ոգով գրաւոր և բերանացի բողոքեցին խորհրդարանի Աշխատաւորական կուսակցութիւնները և ազատական կուսակցութեան մէկ մասը:

Եւրոպական համախմբումները առարկայ ունին աւելի ասիական շահերը, մասնաւորապէս Մօտիկ Արևելքը որ Ֆինանսական մեծ շահերու և ձեռնարկներու բաց դաշտը կը ներկայանայ Թիւրքիան, ամէն ժամանակէ աւելի, հետզհետէ կուլ կը գնայ միջազգային տնտեսական պայքարին մէջ և անոր ճակատագրին շուրջն է որ գայլերը կը սլքտան: Գերմանիա իր զարհուրելի թաթը նետած է արդէն Փոքր Ասիոյ վրայ և եթէ այդ ընթացքով շարունակէ և Թոյլ տրուի, շատ ժամանակ պէտք չէ որ Թիւրքիան բոլորովին գերմանական գերակշիռ ազդեցութեան տակ ինչայ: Նոր «երբեակ համաձայնութիւնը» իրականանալով Արևելեան հարցը լուրջ և ծանրակշիռ կերպարանք կստանայ, որուն նախաբանը կը հանդիսանայ Մակեդոնիոյ հրատապ խնդիրը:

Սակայն Անգլիա կազմելով այդ ուժեղ երրորդութիւնը, զերծ չէ ներքին յուզումներէ և վտանգներէ: Հնդկաստանի ազգայնական շարժումը, որ երևան եկաւ անակնկալ կերպով ումբային դաւադրութիւնով, Անգլիոյ համար մտահոգութեան կէտ մընէ: Հնդկական յեղափոխութիւնը ճիւղեր ունի արտասահման և երկրին մէջ: Հնդիկները կը պահանջեն ինքնօրինութիւն: Ինչքան ալ առ այժմ մարած համարուի այդ շարժումը, շնորհիւ ձեռք առնած միջոցներու, սակայն կարող է վաղը միջազգային պատերազմի մը առնել, յանկարծ պայթիլ և կաշկանդել Անգլիոյ քայլերը: Գերմանացիք, այդ նախատեսելով կը սիրեն կուշակել որ եթէ Անգլիան Գերմանիոյ հետ պատերազմի բռնէի, իր ամբողջ կայսրութիւնը վրայ պիտի տայ Գերմանացիք յոյս ունին մահմեդական աշխարհի վրայ, որոնք սուլթանի դրոշմով, պիտի ընդվզին և փորձանք դառնան Անգլիոյ Ցարդ, Վիյոմի քաղաքականութիւնը եղած է, շոյել սիրաշահիլ մահմեդական աշխարհը և անոր խալիֆան և ատով սպանալ անգլիացիներուն: Հաւանօրէն Անգլիա պահանջած բարենորոգումները տալով Հնդկաստանին պիտի կրնայ լռեցնել հնդիկները, գոնէ երկար ժամանակի մը համար: Կը մնայ Եգիպտոսը, որ դեռ երկիւղ ազդելու շրջանին մէջ չէ:

\* \* \*

Պարսկաստանը, չունենալով զինւորական հարկաւոր ուժը, որ իր միջազգային իրաւունքները յարգել տայ,

կը բաւականանայ արդարութեան և իրաւունքի պլատոնական բողոքներով երբ թիւրքիա և Ռուսիա, երկուստեք իր սահմանները կը կրծեն և ոտնակոխ կընեն: Ուրմիա և Սալմաստ գաւառները արիւնոտ ասպարէզը եղած է քրդական ասպատակութիւններու, որոնք կը կատարէին, սահմանի թիւրք սպայակոյտի խորհրդով և հրահանգով: Քրդերը ահ ու սարսափ կը սփռեն ամէն տեղ և ռահվիրանները կը հանդիսանան թրքական ակերակասիրութեան: «2էք կշտանար ակերակելէ», կըսէր պարսից ներկայացուցիչը, թրքաց լահէյի ներկայացուցչին, ճիշդ այն պահուն երբ Ուրմիոյ հարաւային մասի գիւղերը տարապարտ տեղը, ակեր ակերակ կը դառնային թիւրք զօրքերէ և քրդերէ: Թիւրքիան սահմանին վրայ պատրաստ է, յարմար առիթին, Ատրպատականի վրայ խոյանալ. քանի որ Պարսկաստանը անզօր է, ներկայ ճգնաժամին, ոչ մէկ լուրջ դիմադրութիւն ընել: Այս արշաւանքներու հետեւանքով, Պարսկական մէջը, չունենալով ոտքին տակ պինդ հող, և գտնելով ֆինանսական անելանելի տագնապի մը առջև, իր հայրենասիրական բարձր դերին մէջ անդամալուծած է, եթէ վաղը պետական հարւած մը գայ վերջ ղնել անոր համակրելի այլ դիւցազն ողբերգական գոյութեան:

Հիւսիսային կողմէն Ռուսիա, պատրուակ բռնելով պարսկական Գարադաղի մէկ քանի թափառիկ ցեղերու ակազակութիւնները, ուզեց բռնանալ պարսիկ կառավարութեան վրայ և ակերեց ինքնագլուխ կարգ մը խեղճ գիւղեր: Եւ եթէ խնդիրը շատ առաջ երթար Ռուսիա մտադիր էր Պարսկաստանի այդ մասը կուտար: Երկուստեք այժմ համաձայնութեան գալու վրայ են և խնդիրը պիտի վերջացած համարուի, քանի որ պարսիկ կառավարութիւնը գոհացում կուտայ ռուսաց պահանջներուն: Բայց Ռուսիան, ո՛հ, ան զօրաւորագոյնի պահանջները ունի...

\*\*\*

Ռուս-թիւրք պատերազմի լուրերը նոյն յամառութիւնով չեն պտտիր, բայց յամառօրէն երկուստեք պատրաստութիւններ կը տեսնեն, յանկարծակիի չգալու համար, թէև սուլթանը և ցարը կը շարունակեն իրար ապահովել: Սուլթանը յայտնած է թէ ակահազ վիլայ, ինք Ռուսիոյ վրայ յարձակելու ոչ մէկ դիտատաւորութիւն չունի. այլ Պարսկաստանի համար է, կամ հայ յեղափոխութիւնը խեղդելու համար: Սակայն մի անգամ լուրը նետուած է և զարկը տրուած, ճիշդ այն առածին համեմատ թէ «շունը հաջելէն գայլ կը բերէ»:— Հետաքրքիր է հարցնել, ո՞ւմ համար են այդքան ներուժ զօրահաւաք և ռազմավարք, որ սուլթանի, կառավարութիւնը կը լեցնէ Հայաստանի վիլայէթներուն մէջ, կամ Պովկասի մէջ համախառնական փրօփականդը. Արդեօք Գերմանիոյ քաղաքականութիւնն է, թիւրքիան Պովկասի սահմանին վրայ պատրաստ վիճակի մէջ պահել, Եւրոպական պատերազմի ատեն, Ռուսիան ետեւէն կրակի մէջ առնելու համար: Խորհուրդ է: Ով գիտէ, թերևս, թիւրքիոյ բախար պիտի վճուի Հայաստանի լեռնագաշտին վրայ:

\*\*\*

Իտալական նաւերը դեռ իրենց ցուռները չեն դարձուցած թրքական ջուրերէն, որովհետև սուլթանը, լիովին գոհացում չէ տուած և կը խաղցնէ Իտալիան: Իտալական թերթերը կը նկատեն միւսխալմաններուն մէջ հակիրտական շարժում մը. Սուլթանի դէմ ցոյցէն իվեր:

Արեւէն որովհետև սկսած է խաղաղիլ, կղզին գըտնուած միջազգային զօրքերը, որոնք երաշխիք մըն էին ... սուլթանի վեհապետութեանը, մինչև տարիին վերջը պիտի պարպուին: Սուլթանը պարտք կը համարի բողոքել այդ հեռացումին դէմ և կը պահանջէ Եւրոպայէն երաշխաւորութիւն ապահովող սուլթանի վեհապետութիւնը ինչպէս նաև հոն գտնուող միւսխալմաններու վիճակը: Հակառակ պարագային, կը պնդէ որ 20 հոգիէ ջոկատ մը զօրք գտնելի Օսմանեան դրօշակը պահպանելու համար: Արեւտէն, կառարկէ Համիդի կառավարութիւնը, կարող է քաջալեր մը ըլլալ միւս յուսնաքնակ կղզիներուն մէջ խլրտում առաջ գալու Յունաստանի միանալու համար... Ինչպէս Սամսը...

Յօյները ուրախ են որ իրենց երազը, Արեւտէն Յունաստանի միանալու իղձը, իրականանալու մօտ է վերջապէս:

Յունաստանը թերևս կերպէ, յանուն հելլենականութեան «մեծ գաղափարին», երկրորդ անկախութեան պատերազմ մը մղել թիւրքիոյ դէմ...

### Ա Մ Ս Ա Լ Ո Ւ Ր Ե Ր

Սամոս կղզին նոր արիւնահեղութեանց թատր եղաւ: Մայիս 25ին, ներքին և պարզ միջադէպի մը հետեւանքով, յանկարծ թիւրք զօրքեր կղզին յամաք ելան: Աղղեցիները իրենց ինքնօրինութեան դէմ ոտնձգութիւն համարելով, կուխ տեղի ունեցաւ Երկուստեք սպաննուած և վիրաւորուած են 150 հոգի, մանաւանդ կիներ և երեխաներ: Սելանիկի վախին Ռեուֆ փաշան, մարտանաւերով մեկնեցաւ Ալիի (Սամոսի մայրաքաղաք), Պոլսէն ևս մարտանաւ և զօրքեր ճամբայ ելան, կարգը վերահաստատելու համար: Սուլթանի այսքան կտրուկ միջոցի դիմելը արտակարգ կը թուի: Աղղիին մէջ հեռագրաթերթերը կտրուած ըլլալով արտաքին յարաբերութիւնները խզեցան, ժողովուրդը բարձր դիրքերու վրայ սպաստանած, պատրաստուեցաւ դիմադրելու: միւս կողմէն եւրոպական երաշխաւոր պետութիւններուն, Անգլիա, Ֆրանսա և Ռուսիա, կոչ եղաւ որ նաւեր ղրկեն, թիւրքերու կողմէն կոտորածի առջևը առնելու համար: Մօտ 150 կիներ, երեխաներ, սարսափահար, Շիրա կղզին ապատանեցան իրենց երեւակայութեան մէջ արթնալով, պատմութեան արիւնոտ սարսափելի լուրերը, որ թիւրքերը ձգած են յունաց և առհասարակ քրիստոնեայ ազգերու պատմութեան մէջ, և որոնք խաղաղութիւնը վերահաստատել ըսելով, կը հասկնան ընդհանուր և անդուժ և սանձարձակ ջարդ:

Սամոսցիք կրակ ըրին թիւրք մարտանաւերուն վրայ որոնք, պատասխանած են, վախցնելու համար իբր թէ, անուռմը հարւածներով:

Թիւրք կառավարութիւնը կամբաստանէ տեղին յոյն հիւպատոսը, որ հակառակորդ կուսակցութիւնը քաջալերելով, պատճառ եղած է ներկայ խռովութիւններուն, և կը պահանջէ անոր հեռացումը: Յօյն կառավարութիւնը չընդունիր սուլթանի կառավարութեան մեղադրանքը և կը պահանջէ որ թիւրքիա փաստաձեւէ իր ըսածները:

Շատ մը թերթեր, ինչպէս և թիւրք աղբիւրէ, համ-

հեղինական բնաւորութիւն կուտան Սամոսի շարժման, իբր թէ Սամոսիք կուզեն կրեալի պէս Յունաստանի միանալ: Այս դիտումաւոր լուրը ևս կը հերքեն Աթէնքի Լրագրիչը և կըսեն որ Սամոսի միջադէպը իշխանին և ժողովրդին միջև պարզ վէճ մըն է և ուէ կայ չունի համահեղինակութեան հետ, և թէ գրգռումը հետեւանք է այն բանին որ տաճիկ կառավարութիւնը բռնաբարելով միջազգային դաշինքը, որ 1832 դեկտ. 11-էն ի վեր, կերպարաւորէ կղզիին ինքնավարութիւնը, կղզին զօրք հանած է: Սամոսիք բացարձակ կը յայտարարեն որ իրենք հաւատարիմ են վեհապետ տերութեան, և պատրաստ են զէնքերը վար դնել, բայց կը պահանջեն միանգամայն որ երաշխաւոր պետութիւնները նաև որ զրկեն զիրենք ապահովելու համար և հեռացի կառավարիչը՝ Անդրեա Կոփասիս, որ երբեք չէ սիրած կղզեցիներէն:

„Temps“ Ֆրանսական մեծ օրգանը, կաւելցնէ այս աւթիւ, „Թրքական զսպումները չափաւոր ըլլալու սովորութիւնը չունին: Եւ փորձաւորութիւնով դիտենք թէ ինչպէս Գուռը, երբ ասպարէզ դտնէ, կը վերահաստատէ կարգը“: Եւրոպայի պարտականութիւնն է հսկել որ սահմանը չանցնի Թիւրքիան; և սիկարէթներու ապստամբութիւնը կոտորածի չայլասեուի“:

**ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԻԵՐ**

Հ. Յ. Դ. Պալք Է-րդ Շըլ. Ժողովս—գումարած 1908 ապրիլ 6-էն 22—ամրադրանաւորով Դ-րդ Ընդհ. Ժողովի տւած որոշումներուն և լսելէ ետք շրջանիս ըմկեր-պատու-զամաւորին տեղեկատուութիւններն ու լուսաբանութիւնները՝ կատարեց մտքերու փոխանակութիւն և կուգայ յայտարարել միաձայնութեամբ թէ՛

1) Նկատի ունենալով որ Պալք. շրջանի նախորդ արտակարգ Շըլ. Ժողովի կարգ մը որոշումները թէև ըստ էութեամբ հակառակ եղած չեն Ընդհ. Ժողովի որոշումներուն՝ բայց մէկ քանի հարցերու մէջ երևութապէս աններդաշնակ հանգամանք մը կը կրեն՝ իմչ որ արդիւնք է միմիայն Պալք. Շըլանի ունեցած հեռաւոր ու մեկուսացած դիրքին, և հետևաբար նոյն հարցերու մկատմամբ ըմկերներու անարկայական ծանօթութիւններէ զրկւած ըլլալու իրողութեամբ,

2) Նկատի ունենալով որ Դ-րդ Ընդհ. Ժողովին բոլոր որոշումները բոլրած են մեր կեանքին հաստունացած պահանջներէն և համապատասխան մեր քաղաքական ու տնտեսական պայմաններուն:

3) Նկատի ունենալով որ Դ-րդ Ընդհ. Ժողովը զրեթէ միաձայնութեամբ յետս մղած է անշատմամ ամէն սկզբունք՝ որ կարող էր մեծ ու անդարմանելի վնաս հասցնել Հայ Ազատագրական շարժման, Հայ Աշխատաւորութեան ընդհանրապէս և Ցանկահայ Դատին մասնաւորապէս:

Թարգման կը համընդհանրապէս իր Շըլանին և կը յայտնէ իր սրտագին գոհունակութիւնը և ամխառն ուրախութիւնը Դ-րդ Ընդհ. Ժողովի իմաստուն տնօրինութեանց և բեղմնաւոր արդիւնքին մկատմամբ, որոնց շնորհիւ ամգամ մըն ալ սահմաններով անշատած, իրաւագործ և քաղաքական ու տնտեսական ազատութեամբ կարօտ Հայ Աշխատաւորութիւնը հանդիսաւորապէս կամրացնէ իր եղբայրութիւնը ու անըմկնելի կը պահէ իր ճակատը՝ ընդհանուր թշնամիւմ դէմ:

Հ. Յ. Դ.

Պալք. Է-րդ Շըլանային Ժողով

**Ա Ձ Դ**

Հ. Յ. Դաշնակցութեամբ շարքերից Ձոռու Մամուկ կոչւած անձը վաղուց ի վեր մոռամալով իր կոչումը դարձել էր մի հասարակ սրիկայ, որը և իր կատարած հակակազմակերպչական և հակակուսակցական ըմթացքի և Դաշնակցութեամբ անուր շահագործելում համար, եմթարկւած էր բազմաթիւ մկատողութիւնների և մախազգուշացման: Իսկ վերջին ժամանակներում շամտածի գործերում մասնակցելու և մամաւանդ շա մ տ ա ժ ի ս տ մ եր ի մ կ ու ս ա կ ց ա կ ա մ գ է մ ք մ ա տ ա կ ա ր ա ր ե լ ու հ ա մ ա ը, Հ. Յ. Դ. Ձորորդ Կ. Կօմիտէի որոշումով յանձնեց Կովկասեան Ահաբեկիչ Մարմնի դատիմ, որի կողմից և՛ եմթարկեց մահաւան պատժիմ, որը գործադրեց ապրիլի 22-ի երեկոյեան:

Սա մի աւելորդ խրատական փաստ թող լինի բոլոր մրանց, ովքեր կը յամղգնեն կազմակերպութեամբ անուր շահագործել:

Հ. Յ. Դ.

ԿՈՂԿԱՍԵԱՆ ԱՀԱԲԵԿԻՉ ՄԱՐՄՆԻՆ

**Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն**

ՈՍԿԱՆԱՊԱՏԻ ԵՐՐՈՐԿ ԿՕՄԻՏԷ՝—Յուլուար 1-ից մինչև դեկտ. 31-ը 1906 թ.: Հետեւալ խմբերից՝ Արժուրի ա. 206 ռուբլի, Թուման 149. 20 Բաժժի 142.70, Սուր 141.50, Տալուրիլի 93, Հայրենասէր 92.50, Բրիտափոր Միկայէլեան 83.85, Հուր 79, Տանգան 76, Հրայր 70. 45, Նոր-Սերունդ 69. 80, Վեցդարեան 59. 40, Կայծակ 57. 45, Չուլարան 52. 15, Ալագեալ 47. 80, Սասուն 45-45, Կորիւն 44. 65, Թուր ա. 46, Ապագայ 34. 50, Յորդանան 30. 82, Մասիս 30, Արժուրի թ. 30, Բայեդուր 29. 40, Գաղափար 27. 80, Վրէժ 27. 55, Գեղզիուի 26. 75, Որոս 23. 85, Թուր թ. 22. 30, Նոր Յոյս 20. 35, Անձնէր 18. 45, Ազատ 17. 40, Նոր-Երանդ 16. 80, Հաւաս 10. 80, Վազգէն 10. 14, Մեմակ 8, Լարիպ 7. 50, Ռահիլիւրան 3, Գ. Դ. 51, Գ. 3. 13, Գ. Խ. 12, Ն. Մ. 12, Խ. 2. 6, Ա. Օն 20, Մել. Բէգ. նւեր 2, Ծննդ. տնիմ ժող. 161, Մ. Վ. 3. 55, Ս. Խ. Մ. 5: Երեկ. եւ ներկայացում, Թուման խումբի երեկոյից 16. 83 Ա., Գ., Վ. երեկոյից 34, Ա. երեկոյից 8. 41, Նոր-Սերունդ խումբի ներկայացումից 24, Խս 58. 7, թ. Ենթակ. 48 ռ. 15 կոպէկ: Գումար 2417 ռուբլի 32 կոպէկ: 1907-ի ընթացում: Հետեւալ խմբերից՝ Սուր 7 ռուբ. 50 կոպ., Յաւաջ 59.95: Հայրենասէր 51. 9, Ն Ն 28, Ճառագայթ 45. 12, Ալագեալ 25, Վրէժ 24. 15, Յորդանան 20. 5, Սասուն 14. 10, Ազատ 13, Բաժժի 11, Որոս 8. 50, Գաղափար 7. 40, Նոր-յոյս 6. 42, Վեցդարեան 6.40, Մասիս 3. 20: Նւերներ՝ Լմ. 12, Ար. 6, Ա. Օն. 5, Դերեկիկից 1: Երեկոյից 1906 թ. ապառիկից 18. 50: Գումար 437 ռուբլի 38 կ.:

Մամուկի տակ է շուտով լոյս կը տեսնէ

Ա Ր Ա Ր Ա Տ Ա Կ Ո Ւ

**“ՍՕՑԻԱԼԻՍՏԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ”**

Լ յ յ տ ե ս ա ծ է

Ս Ի Ա Մ Ա Ն Թ Օ Ի

**»Հ Ա Յ Ո Ր Գ Ի Ի Ն Ե Ր Ը«-ի**

Գ. Շ ա Ր Բ ը

Դ ի մ է խ մ բ ա գ ռ ու թ ե ա ն ս :